

ՄԱՏԵԼԱԾՈՒՄ «ՍԵՐՄԵՆՆԱՅԻՆ»



ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ

ՃԵՄԱՐԱՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀՐԱՄԱՆԱԲ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Ն 190

*Տպագրվում է երաշխավորությամբ
ԳՀԾ-ի Պատմական աստվածաբանության
և հունանիտաբ առարկաների ամբիոնի*

Աշխարհաբարի փոխադրեցին
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Գևորգյան հոգևոր ճեմարանի սաները

Խմբագիր՝ Նորայր Պողոսյան

ՀԱԿՈՒՔ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼՅԱՆ

Ն 190 Հոգևոր գրույցներ: Հատվածներ «Գանձարան ծանուցմանց» գրքից/ Հակոբ Պատրիարք Նալյան. – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013.– 80 էջ:

Հակոբ Պատրիարք Նալյանի «Գանձարան ծանուցմանց» գրքից մի շարք քարոզներ, փոխադրված գրաբարից աշխարհաբար, ներկայացվում են «Հոգևոր գրույցներ» ընդհանուր խորագրի ներքո:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ

ԳԱՔՐԻԵԼ ՉԵՄՊԵՐՃՅԱՆԻ

ISBN 978-9939-59-123-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԻՄՆԱԳԻՐ
ԳԵՎՈՐԳ Գ.
ՄԵԾԱԳՈՐԾ ՆԱՅԻԱԳԵՏԻ
ԾՆՆԳՅԱՆ 200-ԱՄՅԱԿԻՆ



Գ Ի Ր Բ Կ Ա Չ Ե Յ Ե Ա Լ
Գ Լ Ն Չ Լ Բ Լ Ն Ե Ծ Լ Ն Ո Ւ Յ
Մ Լ Ն Յ .

Ար Պարունակէ՛ զչորեսին հատորս զայսոսիկ
Յ սաղնումն՝ ուսուցանէ զանագ իրիցունս և
զամ քրիստոնեայս և զքարոզիչս զօգ կրթեալն ՚ի
դպրատան : յորում գտանին հարկանոր ուսանել
լիք և առնելիք բարոյականք : Յերկրորդումն՝ ու
սուցանէ զճամբսս գիտելիս իբրև զՏրճոնելիս .
արգելիչ ծուլութի, բամբնց, և դատարկաբա՛ ուե .
Յերրորդումն՝ ուսուցանէ զոմանց Տաց պատմութիս .
իբր հեռացոյց տիւրպիւնիւ հայելայն ներկայացու
ցանելով : ՚ի Չորրորդումն՝ պատմէ՛ զճանգամանս
ոմանց գլխանոր քաղաքացն հայոց :

Ը արագրեալ գրաբառ և Տաբառ ոճիւ ՚ի Յա
կօբ մեղապարտ երբեմն սբյ ԼԷՄի, և նարդեմնիս
Պատրիարքէ՛ Աստանդնուպօլսոյ :
՚ի Հայրնյալե Գերագահ ԼԹոռոյ սբյ ԼԷՄիա
ծնի՛ Տեառն Խոջկայ սրբզնակատար ամից հայոց
Վեհափառ Աթղկսի և Նայրագոյն ՔՅնյստի .
և ՚ի Պատրիարքուե սբյ ԼԷՄի, Տեառն Թեոդօր
րոսի Խորենացոյ՝ Մաքրակենցաղ և ԸՃիմաստ
Լճք եմպիս : * Յամի ՄարդեղուԹԷ ՏԵ , 1758 .
և հայոց ու ԺԷ . Յամսեանն մայիսի սկսեալ, և ՚ի
հոկտեմբերի աւարտեալ և ՚ի տպիլ սկսեալ :

* Օգնեա՛ Լճնակարօղ ՏԻ՛ :

612

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*«Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք,
միւսին՝ գիտութեան խօսք... մէկին՝
տեսակ-տեսակ լեզուներով խօսելու շնորհ,
միւսին՝ լեզուների թարգմանութեան շնորհ»:*

(Ա Կորնթ. ԺԲ 8-10)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը նոր ծրագիր է նախաձեռնում, երկար ճանապարհ, բայց հարստացնող ու բարի արդյունք ակնկալող մի ծրագիր:

2012 թ. Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսումնամեթոդական խորհրդի առաջարկով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ գրաբարն ընդգրկվեց ճեմարանի բակալավրիատի ավարտական քննությունների ցանկում: Այս իրողությունը հրամայական դարձրեց գրաբարի ուսուցման հանդեպ որակապես նոր վերաբերմունքի դրսևորումը: Առարկայի մասնագետների կողմից վերանայվեց գրաբարի դասավանդման ծրագիրը, որոշվեց շեշտը դնել հատկապես թարգմանական հմտության զարգացման վրա՝ նկատի ունենալով, որ հայ հոգևոր ժառանգության հսկայական մասը դեռևս հասանելի չէ ընթերցասեր շրջանակներին: Այս քաղաքականության շնորհիվ ճեմարանն իր առջև նպատակ դրեց նաև նպաստելու հետևյալ քայլերի իրականացմանը.

ա) Գևորգյան հոգևոր ճեմարանում պատրաստել գրաբարի մասնագետներ, բնագրերի թարգմանիչներ:

բ) Նոր որակ հաղորդել գրաբարի հանդեպ առկա վերաբերմունքին և, ինչու չէ, նպաստել, որ գրաբարի ուսուցումն ապագայում տարածվի ուսումնական այլ հաստատություններում, մանավանդ հանրակրթական դպրոցներում:

Ըստ այդմ ճեմարանական տարբեր լսարանների սաների ջանքերով և դասախոսների հսկողությամբ 2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակից սկսած՝ առարկայի ծրագրի շրջանակներում գրաբարից աշխարհաբար են փոխադրվում մեր հին մատենագրության ինքնուրույն և թարգմանական երկերը: Ստեղծագործական ուսումնական ընթացք է դա: Հաստատված ծրագրերին համապատասխան՝ թե՛ դասավանդման, թե՛ ձևավորված առանձին խմբերում քննվում, ուսուցվում, մեկնաբանվում են դասական ու հետդասական շրջանից ժառանգություն ստացած գրաբարյան մեր բնագրերը: Այդ բնագրերից շատերը կարիք ունեն ամբողջացվելու, հրատարակվելու և ընթերցողին ներկայացվելու:

Ճեմարանի գրաբար առարկայի դասախոս բ. գ. թ., դոցենտ Նորայր Պողոսյանի ղեկավարությամբ սաների կողմից ծրագրի բարեհաջող իրագործման առաջին երախայրիքը միտք առաջացրեց խմբագրելու և հրատարակության ներկայացնելու կատարված աշխատանքը, որը, մեր համոզմամբ, միևնույն ժամանակ պիտի ոգևորեր թե՛ մանկավարժներին, թե՛ ուսանողներին՝ հետևողականորեն շարունակելու կյանքի կոչել այս գաղափարը:

Ուրախությամբ պիտի արձանագրենք, որ ճեմարանականների աշխատանքների հրատարակման գաղափարը մեծ խանդավառությամբ ընդունվեց տեսչության և մանկավարժների կողմից: Այն ոգևորության ալիք բարձրացրեց հատկապես ուսանողների շրջանում՝ վարակիչ օրինակ դառնալով նաև մյուսների համար: Այս վերաբերմունքն ըստ արժանվույն գնահատելու համար տեսչությունը որոշեց հիմնել ուսանողական մատենաշար՝ ճեմարանի սաների թարգմանական աշխատանքները, ինքնուրույն հաջողված ուսումնասիրությունները, ապագայում նաև ավարտաճառերը հրատարակելու համար: Որոշվեց մատենաշարը կնքել **Մերմնացան** անվանումով՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ յուրաքանչյուր ճեմարանցու առաքելությունն է սերմնացան լինել հայ կյանքի անդաս-

տանում՝ համաձայն ավետարանական առակի (Մատթ. ԺԳ 1-9):

Մեզ համար մեծ ներշնչում էր այս ձեռնարկի ընթացքում անակնկալ կերպով բացահայտել, որ դեռևս 20-րդ դարասկզբին Գևորգյան ճեմարանի անվանի տեսուչ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը միևնույն ցանկությունն է արտահայտել: 1902 թ. «Արարատ»-ի մայիս-հունիս համարում «Ճեմարան Մ. Աթոռոյ» խորագրի տակ տեսուչ Հայր Սուրբը, խոսելով ուսանողների ավարտական շարադրությունների (ավարտաճառերի) մասին, նշում է, որ տվյալ տարվա ավարտաճառերից մի քանիսը, «լինելով բարեխիղճ աշխատութեան արդիւնք և ունենալով շատ հետաքրքրական նիւթ, արժանի են տպագրութեան»¹, ապա ավելացնում է. «Ցանկալի էր որ այդպիսիները տարեցտարի լոյս տեսնէին և «Ճեմարանական հրատարակութիւններ»-ի մի շարք կազմուէր նոցանից»²:

Մեզ համար, անշուշտ, մեծ պատասխանատվություն, ինչպես նաև պատիվ ենք համարում, որ հայ ժողովրդի կրթության և լուսավորության հոգսով ապրող հոգևորականի ցանկության մարմնավորողն ենք դառնում այսօր: Մա միանշանակ ցույց է տալիս այն գաղափարական կապը, որով սերունդները շարունակում են իրար, մանավանդ կրթական գործի ասպարեզում: Մա միևնույն ժամանակ մեզ մղում է պաշտպանելու այն փիլիսոփայական

1 Ճեմարանի սաների հաջողված շարադրությունները «Արարատ»-ում հրատարակելու այս նախաձեռնությունն ամենայն հավանականությամբ Կարապետ վարդապետի միջոցով է գործածության մեջ մտել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ճեմարանի փոխտեսուչ եղած շրջանից համատեղության կարգով վարում էր «Արարատ» ամսագրի խմբագրությունը, մեզ թույլ ենք տալիս եզրակացնելու, որ նա ամեն ջանք գործ էր դնում ամսագրի գործունեության և Էջմիածնի կրթական հաստատության միջև գաղափարական կապ ստեղծելու, դրանք իրար շաղկապելու:

2 Կ. /արապետ/ Վ./արդապետ/, «Ճեմարան Մ. Աթոռոյ», «Արարատ», 1902, էջ 474: Կարապետ վարդապետը Գևորգյան ճեմարանի այն երախտավորների թվին է պատկանում, որոնց կյանքն ու ստեղծագործական ընթացքը ոչ միայն անջնջելի հետք են թողել 19-րդ դարավերջի և 20-րդ դարի առաջին տասնամյակի Հայոց եկեղեցու պատմության վրա, այլև մեծ ներգործություն են ունեցել հայագիտության զարգացման գործում առհասարակ:

համոզումը, որ գաղափարները չեն մեռնում. անձը կարող է դադարել ֆիզիկապես գոյություն ունենալուց, սակայն նրա արտահայտած բարի գաղափարը մի օր անպայման կյանք է ստանում, դառնում իրականություն, հոգ չէ թե ուրիշի միջոցով:

«Սերմնացան» մատենաշարի հիմնադրումը միաժամանակ թող դառնա ճեմարանականներիս երախտիքի շոշափելի արտահայտությունը Հայ եկեղեցու ամենալուսամիտ դեմքերից մեկի՝ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի անմահ հիշատակին, որն անձնուրաց կերպով աշխատեց հանուն Գևորգյան հոգևոր կրթարանի պայծառության՝ հայ ազգին և եկեղեցուն տալով այնպիսի սերունդ, որով մեր ժողովուրդը կարող է հպարտանալ բոլոր ժամանակներում, սերունդ, որի ապրած կյանքն ու արժեքները միշտ ոգևորում են մեզ՝ հավատարիմ մնալու մեր սեփական ինքնությանը, այլև ինչպես հայ նշանավոր գրող Կոստան Զարյանը կասեր, մեր առջև «ինքնության նոր եսեր հայտնաբերելու» ուղին են բացում:

Եվ ահա ընթերցողին է ներկայացվում մեր սկսած ծրագրի՝ թարգմանական մատենաշարի առաջին արդյունքը՝ Հակոբ Նալյան պատրիարքի «Գանձարան ծանուցմանց» աշխատության քաղվածային թարգմանությունը: Կարծում ենք, որ այս և հաջորդ թարգմանական երկերը հոգևոր հող կապահովեն հայ կյանքի անդաստանում՝ քրիստոնեական հավատքի սերմերի ծլարձակման համար:

Միջնադարյան մեր գրավոր անսպառ ու լուսավոր ժառանգությունը՝ աստվածաբանական, պատմագրական, դավանաբանական և այլ բնույթի տասնյակ ու հարյուրավոր ստեղծագործություններ, որոնց գրաբար բնագրերը հարյուրամյակներով գործածվել են մեր Եկեղեցում ու համալսարանական հաստատություններում, այսօր նոր շունչ ձեռք բերելու և ըստ այդմ մեր Եկեղեցու անդամներին նորովի մատուցվելու անհրաժեշտություն ունեն: Այդ արժեքներին համահունչ պետք է կերտվի մեր այսօրը, դրանց հիման վրա կառուցվի այն լուսավոր ապագան, որի

համար մինչ ի մահ տքնել են հայ վարդապետն ու գրիչը, իշխանն ու շինականը:

Հանդգլած ենք, որ այս տեսիլքը կյանքի կոչելու լավագույն դարբնոցը հենց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր աստվածաբանական համալսարանն է, որ շարունակում է իր պատմական երթը Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի բարձր առաջնորդությամբ և օրհնությամբ:

Եվ ուրեմն հանուն Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսչության, մանկավարժների և սաների մեր որդիական երախտագիտությունը հայտնենք Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսին այն հոգատար և ջերմ վերաբերմունքի համար, որ տաժում է հոգևոր այս կրթարանի յուրաքանչյուր աշակերտի հանդեպ, այլև ջանք չի խնայում Գևորգյան ճեմարանը դարձնելու ժամանակի լավագույն ուսումնական հաստատությունը, որի սաները պիտի գինվորագրվեն հայ ժողովրդի հոգևոր վերածնության սրբազան պայքարին՝ նվիրումի և հանձնառության իրենց օրինակով ներշնչելով մեր ժողովրդի զավակներին: Ամեն ճեմարանցի պետք է գործի այն բարձր գիտակցությամբ, որ «Դիմացից սերունդներն են նայում», և իր կյանքը դրա համեմատ ապրի: Ուստի բարի երթ, անվրդով ընթացք մաղթենք «Սերմնացան» մատենաշարին, աղոթենք, որ այն ծառայի իր բարի նպատակին և իր կնիքը թողնի հայ հոգու վրա՝ «ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն»:

Տ. Գևորգ եպս. Սարոյան

Տեսուչ Գևորգյան հոգևոր ճեմարանի
Վերատեսուչ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի
հոգևոր կրթական հաստատությունների

*Տօն Գիտի նշխարաց Ս. Գրիգոր Լուսավորչի
Բ Մայրավանս Սրբոյ Էջմիածնի, 2013 թ. յունիսի 15*

ՄՈՒՏՔ

Սիրելի՛ ընթերցող, քեզ է ներկայացվում 18-րդ դարի նշանավոր հայ հոգևոր գործիչ Հակոբ Պատրիարք Նալյանի «Գանձարան ծանուցմանց» քարոզների գրքից¹ մի պատառիկ՝ վերածված աշխարհաբարի: Բնագիրը գրաբարից աշխարհաբարի են փոխադրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի 2011-2012 թթ. Գ և Դ լսարանների սաները՝ միշտ ունենալով ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի խրախուսանքն ու քաջալերությունը:

Ներկայացվածը, իհարկե, «Գանձարանի» գիտական ամբողջական թարգմանությունը չէ: Այն ծնվել է ուսումնական հանձնարարությունների արդյունքում և որոշ իմաստով կարելի է այսպես բնութագրել՝ «ինչպես են ճեմարականները ընկալում Հակոբ Նալյանին»: Թարգմանելու համար ընտրվել են այնպիսի հատվածներ, որոնք պատասխան են ժամանակակից մարտահրավերներին:

Ո՛վ է Հակոբ արք. Նալյանը:

Հակոբ Նալյան Զմնարացին (1706-1764) հայ հոգևոր ու մշակութային երևելի ներկայացուցիչներից մեկն է: Որպես հոգևորական ու գիտնական՝ ասպարեզ է իջել այն ժամանակամիջոցում, երբ Հայ եկեղեցու անդաստանում իրենց օգտաշատ և ազգանվեր գործունեությամբ փայլում էին Հովհաննես Կոլոտ և Գրիգոր Շղթայակիր նվիրական պատրիարքները:

1 **Յակոբ Նալեան**, «Գանձարան ծանուցմանց», Կ. Պոլիս, 1758:

Հակոբ արք. Նալյանը եղել է Կ. Պոլսի հայոց պատրիարք (1741–49, 1752–64), Երուսաղեմի հայոց պատրիարք (1749–52), հայտնի է որպես մատենագիր, մեկնիչ: Ուսանել է Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի դպրատանը՝ աշակերտելով Կ. Պոլսի հայոց հռչակավոր Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի (1678–1741) պատրիարքին: 1729-ին ձեռնադրվել է եպիսկոպոս, 1734-ին ստացել «աստվածաբան» կոչումը: Հիմնադրել է Կ. Պոլսի Գումգափու թաղի Մայր դպրատունը և դասավանդել այնտեղ:

Զարմանալի արգասաբեր ու բազմաբովանդակ է Հակոբ Նալյանի մատենագրական ժառանգությունը: Նրա աշխատություններն ունեն աստվածաբանական, դավանաբանական, մեկնողական ուղղվածություն, որոնցից շատերը եղել են ժամանակի հիմնարար երկերը և պայմանավորել են հայ հոգևոր, աստվածաբանական մտքի բարձր նշաձողը: Պետք է հիշատակել հատկապես «Մեկնութիւն Հայր մերի», «Մեկնութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ», «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան» աշխատությունները: Վերջինները պահպանվել են ձեռագիր մատյաններում: Իր կենդանության ժամանակ տպագրվել են Հ. Նալյանի մի շարք երկեր, որոնց ոչ ամբողջական ցանկը հետևյալն է՝ «Մեկնութիւն աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ» (հտ. 1–2, 1745), «Վէմ հաւատոյ» (1733), «Քրիստոնէական ուսանելի և կամ քրիստոնէից վարժիչ» (1737), «Ճրագ ճշմարտութեան» (1756), «Գիրք կոչեցեալ Զէն հոգևոր» (1757), «Գանձարան ծանուցմանց» (1758), «Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր» (1760):

1758 թ. տպագրված «Գանձարան ծանուցմանց» աշխատությունը քարոզների ժողովածու է: Գրքի ուղղվածության մասին խոսում է ինքը՝ հեղինակը, ով առաջաբանում գրում է. «Գիրքն ուսուցանէ զաւագ իրիցունս և զամենայն քրիստոնեայս և զքարոզիչս զոչ կրթեալսն ի դպրատան, յորում **գտանին հարկաւոր ուսանելիք և առնելիք բարոյականք**»:

Համաշխարհային իմաստասիրական, աստվածաբանական, բարոյական մտքի լավագույն գիտակ է Հակոբ

Նալյանը: Նա իր քարոզներում ըստ անհրաժեշտության օգտագործում է մի շարք աղբյուրներ: Նախնական դիտարկմամբ դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբի.

- պատմագրական երկեր

- փիլիսոփայական մտքեր և երկեր (Սուկրատես, Արիստոտել և այլն)

- աստվածաբանական երկեր (Օգոստինոս Երանելի, Հովհան Ոսկեբերան և այլն)

- ավանդություններ, այդ թվում՝ անտիկ աշխարհի և միջնադարի մտածողների ու գործիչների մասին:

Եվ ահա իր անհատակ գիտելիքների և անշուշտ կյանքի փորձառության միաձուլմամբ մեզ է ներկայացնում, ինչպես ինքն է ասում, «համեստ գիտելիքներ»՝ որպես «արգելիչ ծուլութեան, բամբասանաց և դատարկաբանութեան»: Այդպես 848 էջ ընդգրկող գրքի ամեն մի գլուխն իրենից ներկայացնում է քրիստոնյայի միտքը սնուցող շիտակ մի քարոզ այն մասին, թե ինչու պետք է ճշմարտախոս լինել («ճշմարտախոսները հրեշտակներ են»), ինչպես պետք է վարվել զավակների հետ («երեխաների մեջ պետք է ամոթխածություն և ուսման հանդեպ սեր դաստիարակել»), ներկայացնում է քարոզներ սիրո, ապերախտության, նավաբեկությունից զերծ մնալու մասին և այլն, և այլն:

Դրանք Նալյան պատրիարքի հոգեպարար գրույցներն են քրիստոնյայի հետ: Ամեն մի հատված ընթերցելիս կարծես ժամանակը վերանում է, հայտնվում ես լուսավառ մի սրահում ու խաղաղ գրույցի ես բռնվում հենց նրա՝ մեծ մտածող Հակոբ Նալյանի հետ՝ խոնարհությամբ, ակնածանքով, սիրով... Եվ հենց այդպես էլ վերնագրել ենք գրքույկը՝ «**Հոգևոր գրույցներ**»: Նրանում նաև ընդգծված կտեսնենք Հակոբ Նալյանի մտքի որոշ խտացումներ, որոնք իրոք կենտրոնանալու, խորհրդածելու ազնիվ առիթներ են բոլորիս համար:

Համոզված ենք, որ 18-րդ դարի հայ աստվածաբան-հեղինակի մտքի արդյունքը բնավ չի կորցրել իր արդիա-

կանությունն ու թարմությունը և հավասարապես կարող է սնուցել 21-րդ դարի քրիստոնյա մարդու միտքն ու հոգին:

Անշուշտ, տեսանելի է այն բազմարդյունք հրատարակչական գործունեությունը, որ ծավալվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հովանու ներքո: Տեսանելի է, թե ինչպես են նորովի հրատարակվում, հաճախ նաև աշխարհաբարի վերածվում մեր մատենագիրների երկերը, հասու դառնում ներկայիս ընթերցողին, ընդ որում հասու են դառնում թե՛ բովանդակության, թե՛ նաև դրանց միջոցով մեր գրաբար լեզվին ևս մեկ անգամ անդրադառնալու առումներով: Ներկա գրքուկը գալիս է լրացնելու այդ շարքը:

Ուրեմն բարի՛ երթ, սիրելի՛ ընթերցող, Հակոբ Նալյանի հոգևոր աշխարհում մտորելիս, բարի խորհրդածություններ և արթուն մտքեր:

Նորայր Պողոսյան

ԳՀՃ գրաբարի դասախոս,
բանաս. գիտ. թեկնածու, դոցենտ

ՀՈՂԵՐ ԶՐՈՒՅՑՆԵՐ

ՀԱՏՎԵՐ ՀԵՄԻ ՊԵՐԻՍԷ ՆԱՅԱՆԻ
«ԿԱԶԱՐԱՆ ԾԱՌՈՒՑՐԱՆՑ» ԿԷԻՑ

ԾՆՈՂՆԵՐԻ՝ ԻՐԵՆՅ ԶԱՎԱԿՆԵՐԻՆ ԲԱՐԻՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝¹

Երբ մեղուն մուգ ծաղկից նեկտար է հավաքում, պատրաստված մեղրը մուգ է լինում, իսկ երբ բաց գույնի ծաղկից է հավաքում, մեղրը նույնպես բաց գույն է ունենում: Պղտոր ակունքից պղտոր ջրեր են բխում: Նմանապես և կաթնակեր մանուկն իր վարքով նմանվում է իրեն սնուցողին: Այդպես Տիտոս կայսեր² հայրը գինեմոլ և խնջույք սիրող էր, այդ պատճառով Տիտոսն էլ գինեմոլ և թույլ եղավ:

Ինչպես որ մաքիից կաթ ուտող ուլի մորթն է փափկում, այնպես էլ զավակներն են կրթվում, երբ դաստիարակվում են: Աշակերտն անարվեստ վարպետից չի կարող նուրբ արվեստ սովորել, և հաստ բրդից բարակ թել չի մանվում:

Արքեղայոսը, մի չար բերան ունեցողի տեսնելով, ասաց. «Հավանաբար վատ կաթնատու է ունեցել»:

Կայենի դուստրերը գեղեցկադեմ էին, սակայն բարքով տգեղ էին՝ իրենց հոր նման: Դրան հակառակ՝ Սեթի որդիները տգեղ արտաքին ունեին, սակայն վարքով այն աստիճան գեղեցիկ էին, որ Աստծու որդիներ կոչվեցին:

1 Թարգմ.՝ Վահան սրկ. Սահակյան:

2 Տիտոս Ֆլավիոս Վեսպասիանոս, Հռոմի կայսր (79-81):

Հովաս արքան բարեպաշտ դարձավ Հովիադ սուրբ քահանայապետի խրատներով: Սակայն երբ քահանայապետը մահացավ, նա, համաձայն ժողովրդական խոսքի, թե կարմիր կովը կաշին չի փոխում, չմնաց նախկին բարեպաշտության մեջ: Եվ նա, չար իշխանների խրատներով առաջնորդվելով, շրջվեց բարի մտքերից և դարձավ կռապաշտ, իսկ բարի խրատողին՝ Հովիադի որդի Ջաքարիա քահանայապետին, հենց տաճարում՝ Սուրբ Սեղանի առջև սպանեց (*Բ Մկաց. ԻԴ 17*):

Լա՛վ հիշեք, զավակներ ունեցող ծնողնե՛ր, եթե կամենում եք ձեր զավակներին բարիքի մեջ տեսնել, ապա հենց մանկությունից նրանց լավ դաստիարակեք և բարեմիտ ուսուցիչներին հանձնեք, քանի որ բարի ծառը բարի պտուղ է տալիս: Իսկ եթե անտարբերության մատնեք, նրանք անառակ կյանքով կապրեն և պատուհաս կդառնան ձեզ համար, որովհետև դուք էլ նրանց հետ նույն պատիժը կկրեք: Այսպես Աստված անխրատ ոչխարների արյունը խոստացավ հովիվներից պահանջել (*Եզեկ. Գ 18*):

Մողոմոն Իմաստունն ասում է. «Խրատված որդին իմաստուն կլինի, իսկ անխրատը կտարվի ծառայության» (*Առակ. Ժ 5*): Եվ ոչ միայն ծառայության, այլև մահվան կտարվի անխրատ զավակը, ինչպես Հեղի քահանայապետի որդիները: Վերջինները ժանտ և Աստված չճանաչող կոչվեցին, քանի որ Հեղին նրանց մանուկ հասակից երես էր տվել, և նրանք անխրատ էին մեծացել, այդ պատճառով էլ մահվամբ պատժվեցին, նաև իսրայելացիների կոտորվելու և Ուխտի Տա-

պանակի գերվելու պատճառ դարձան (*Ա Թագ. Բ 12 և Դ 10*):

Սողոմոնն ասում է. «Խորագետ որդին հնազանդվում է հորը, իսկ անհնազանդ որդին պիտի մատնվի կորստյան» (*Ամսկ. ԺԳ 5*): Ճշմարիտ է ասված. «Անգգամ և անխրատ որդուն իր հոր պարանոցից կախել է պետք»:

Պարսից օրենսդիր Զալևկուր¹ օրենք էր սահմանել, որ «երթե որևէ մեկը շնություն գործելիս բռնվի, պիտի կուրացվի»: Մի օր նրա որդին բռնվեց շնություն գործելիս, և նա հրամայեց հանել իր որդու աչքերը: Մինչ շատերը շփոթված սկսեցին աղաղակել, նա հանել տվեց ի՛ր մեկ աչքը և ապա որդու մեկ աչքը, որպեսզի իր սահմանած օրենքը չխախտվի:

Մի անգամ Դիոգենես փիլիսոփան մի անկարգ մանուկի տեսավ, ով վարպետի աչքի առաջ օր օրի ավելի անտանելի էր դառնում: Դիոգենեսը վարպետին խոսքով ապտակ հասցրեց՝ ասելով. «Ինչո՞ւ ես այդպես դաստիարակում մանկանը: Աչքերդ լայն բաց արա, միգուցե հանկարծ Աստված էլ քեզ ապտակի՝ ասելով՝ որդուդ ինչո՞ւ ես այդպես դաստիարակում»:

Արիստիպոս փիլիսոփան² խոսում է այն մասին, թե ինչ է հարկավոր ուսուցանել մանուկներին, և ասում է. «Պետք է ուսուցանել այն բաները, որոնք մանուկները մեծանալով չեն ամաչի կիրառել»:

Իսկ Լյուկոնն³ ասում է. **«Երեխաների մեջ պետք է ամոթխածություն և ուսման հանդեպ սեր դաստիա-**

1 Պարսից անտիկ շրջանի կիսաառասպելական օրենսդիր:

2 Անտիկ հույն փիլիսոփա, Սոկրատեսի աշակերտը:

3 Հռոմեացի գրող (մոտ 150 թ. ն. թ.):

րակել, ինչպես որ ձիերին են վարժեցնում խթանին և սանձին»:

Քրիստոս շատ անգամ կշտամբում էր հրեա չար վարդապետներին, դպիրներին և փարիսեցիներին, որոնք ժողովրդին սխալ էին ուսուցանում Աստծու օրենքը (*Մատթ. ԻԳ*):

Ո՛վ զավակներ ունեցող ծնողներ, մշտապես արթո՛ւն եղեք և ջանք ու եռանդ մի՛ խնայեք ձեր զավակներին կրթելու գործում և իմացա՞ծ եղեք, որ Աստված ձեզ նրանց վրա երկրորդ արարիչ է կարգել, և ինչպես Նա ինքն է կրթում ձեզ Իր հանդեպ երկյուղի, բարեպաշտության և սուրբ ու անբիծ օրենքների միջոցով (քանի որ Տիրոջ օրենքներն անբիծ են), այնպես էլ ձեզանից պահանջում է նույնն ուսուցանել, և այդ դեպքում Իր պարգևներին՝ ձեր զավակներին, ոչ մի աղետ չի պատահի:



ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԵՎ ԶՈՐԵՂ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎԸ¹

Խոսքը մտքի պատկերն է: Քանի որ գործն ու գիտելիքը բխում են մտքից, ուրեմն խոսքը պետք է լինի այնքան ճիշտ և պարզ, որ չլինի թե միտքը մի բան խոկա, բերանը՝ մեկ այլ բան ասի: Այդպես չվարվողը շրթունքներով պատվում է մարդկանց, իսկ սրտով հեռանում է բուն ճշմարտությունից:

Արդ, ճշմարտությունն ամեն ինչից կարևոր է և գորեղ: Ճշմարտությունը գրահավորվելով հաղթեց երեք գովերգվողներին՝ թագավորին, գինուն և կանանց, ինչպես որ Զորոբաբելն է ասում. «Անիրավ է գինին, անիրավ են թագավորը, անիրավ են նաև կանայք» (Ա Եզր. 7 37), իսկ ճշմարտությունը մնում է զորավոր և հավիտյան, և կենդանի է նա, նրա իշխանությունը՝ հավիտենական:

Ահա եկեք իմանանք, թե որքան անհրաժեշտ և գորեղ է ճշմարտությունը:

Նախ՝ Աստված, տեսնելով աշխարհով մեկ սփռված սուտը, բոլոր մարդկանց մահից փրկելու համար աշխարհ ուղարկեց ճշմարտության նախատիպ խոսքը, որպեսզի մարդկանց ազատի ստից: «Արդ, Ես ծնվել և եկել եմ աշխարհ, որպեսզի վկայեմ ճշմարտությունը» (Հովհ. ԺԸ 37): Մինչ Պիղատոսը սպառնում էր սպանել Քրիստոսին («Եթե ճշմարտությունն ազա-

1 Թարգմ.՝ Դավիթ սրկ. Մաստարացի Հովհաննիսյան:

տի ձեզ, իսկապես ազատ կլինեք» (*հմմտ. Հովհ. ժԸ 37*)), վերջինս նախընտրեց մեռնել հանուն ճշմարտության, քան խոսել դրան հակառակ ու փրկվել:

Երկրորդ՝ ճշմարտությունը մարդուն ազատում է շատախոսությունից, որովհետև ինչպես փափկակեցությունից կորչում է ողջախոհությունը, նույնպես և շատախոսությունից կորչում է ճշմարտությունը: Ուստի թեև սերովբեներն աղաղակում էին, բայց չէին շատախոսում, քանի որ միևնույն երեքսրբյանն էին կրկնում՝ «լի են երկինքն ու երկիրն Աստծու երեքսրբյանն ույն փառքով» (*Եսայի Զ 3*), և հավիտենական ճշմարտությանը մտքով նայելիս ցույց էին տալիս ոչ այլ ինչ, եթե ոչ ճշմարտությունը. ուրեմն **ճշմարտախոսները հրեշտակներն են, իսկ ստախոսները՝ սատանայի որդիները՝** ըստ Տիրոջ վկայության:

Երրորդ՝ ճշմարտությունը լույսն է և աշխարհի արևը, որ ամեն ինչ տեսակավորում և ցույց է տալիս այնպես, ինչպես նրանք կան՝ թե՛ գույնով, թե՛ տեսքով և թե՛ այլ ձևերով, մինչդեռ սուտ պաշտոնյաները և շողոքորթները ստությամբ ապականում են բոլորի, այդ թվում իշխանների դասերը:

Պլատոնն ասում է, թե մարդկային ազգին ժանտամահ բերող գազանը շողոքորթն է՝ նման ամենաչար ագռավին. վերջինս մեռելների աչքերն է հանում, իսկ շողոքորթը՝ մարդկանց: Պլուտարքոսը շողոքորթյուրայինին անվանում է «որոգայթ՝ մեղրի մեջ»: Ըստ նրա՝ մեղրածորան շողոքորթն անառակ է, իսկ կյանքից կառչողի համար որոգայթ լարող է, որովհետև գովում է չարը, որպեսզի իր ցանցի մեջ գցի պարզամիտ մարդուն: Այսպես Հերովդեսին շողոքորթներն այնքան գովեցին, մինչև որ հպարտանալով չտեսավ

Աստծու փառքը և պատժվեց Աստծու հրեշտակից ու որդնելով սատակեց (*Գործք ԺԲ 23*):

Ճշմարիտ լինել նշանակում է անկեղծաբար բարիք գործել, հակառակ դեպքում կեղծավորը կանհիծվի և կնմանվի տերևաթափ ու անպտուղ թզենու:

Գեղեցիկ է ճշմարտության մասին հետևյալ առակը. «Ողջ աշխարհից փախստական եղավ ճշմարտությունը և մտավ մի աղքատի տուն: Վերջինս սիրով ընդունեց նրան և հարցրեց, թե ով է նա: Իսկ նա ասաց. «Ես ճշմարտությունն եմ, ում բոլորը նախանձում են և հանգիստ չեն տալիս»: Աղքատը հարցրեց, թե ինչ է նրա գործի անունը: «Ես բոլորին կշտամբում եմ գոռոզության համար, չեմ թաքցնում ոչինչ, և այդ պատճառով չդիմանալով իմ հանդիմանություններին՝ շարունակ հալածում են ինձ, և այդպես շրջում եմ թափառական»: Ընթրիքից հետո գրուցակիցները՝ աղքատը և ճշմարտությունը, գնում են ննջելու: Առավոտյան արթնանում են և հագնում զգեստները: Գնում են ճշմարտությունը, տեսնելով տան միաջրանի պառավին, հայտնում է նրա պակասությունը, որից աղքատը զայրանում և արտաքսում է ճշմարտությանը՝ ասելով. «Տեղդ չեն գտնում, ամենքին ատելի ես, որովհետև ամեն մեկի պակասությունը ցույց ես տալիս. անե՛ծք քեզ»:

Մեղմ, ուրեմն, այսպես պետք է ձևակերպեն. **ճշմարտությունը քանդում է բոլոր ամբողջությունները**, խարխլում և մանրացնում է բոլոր քարերը, կշիռ է, որ ստուգվում է ոսկով և արծաթով, սակայն այնուամենայնիվ շատերի համար ատելի է, ինչպես լույսը՝ ճպրտաճ աչքերի համար:



ԹԵ ԻՆՉՈՒ Է ԱՍՏՎԱԾ ՈՐՈՇ ԳԻՏՈՒՆՆԵՐԻ ԵՐԲԵՄՆ ԹՈՂՆՈՒՄ ՍԽԱՎՎԵԼ¹

Աստված կամեցավ Սուրբ Գրքի գաղտնիքները հայտնել եկեղեցու վարդապետներին, սակայն գրքերի ծովում նավարկողներին թողեց երբեմն ալեկոծվել, որպեսզի իմանան, որ իրենք մարդիկ են, որոնց հատուկ է սխալվելը: Մարգարեներին նույնպես չթողեց իրենց կարծիքին: Գաղ մարգարեն տաճարի կառուցման մասին ասաց Դավթին. «Արա՛ ինչ որ քո սրտում է, քանի որ Տերը քեզ հետ է»: Իսկ Աստված ասաց. «Թող նա՛ ինձ համար տուն չկառուցի, այլ Սողոմոնը»: Կամ երբ Եսային ասաց Եզեկիային. «Կտակ արա, քանի որ մահանում ես» (Եսայի ԼԸ 1), նույն մարգարեի բերանով վճիռը փոխեց. «Եվս 15 տարի որպես հավելում քո կյանքին» (Եսայի ԼԸ 5): Մարգարեները ոչ թե իրենց կամքով սխալվեցին, այլ ամենաճանաչ Աստված իրենց գիտեցածից ավելին հայտնեց նրանց, որն իրենք, որպես մարդիկ, չէին կարող իմանալ:

Որոշ վարդապետներ ասում են, թե Տիրոջ գալստյան ժամանակ ոմանք կենդանի կլինեն՝ հիմնվելով Պողոս առաքյալի խոսքի վրա. «Եվ մենք, որ կեն-

1 Թարգմ.՝ Ազատ սրկ. Մաղաքյան:

դանի մնացած կլինենք, կհափշտակվենք ամպով Տիրոջ առաջ» (*Ա Թեսսաղ. Դ 16*): Իսկ ոմանք էլ ասում են, թե մարդու համար միայն մի մահ կա, քանի որ հենց Պողոսը, որ ասաց, թե կենդանի կհափշտակվենք, ինքը ևս մեռավ: Իսկ «կենդանի մնացած» խոսքը նշանակում է հոգով և մարմնով կենդանի մնացած:

Հերոնիմոսը¹ Մողոմոնին կոչում է սուրբ և երանելի, իսկ Օգոստինոսն² ասում է, թե նրա սկիզբը եղավ բարեպես, իսկ վախճանը՝ չարապես, քանի որ նրան առավել վնասեցին հաջողությունները, քան օգնեց իմաստությունը: Ուրեմն Աստված ոչ թե նախանձի պատճառով թաքցրեց Սուրբ Գրքի իմաստը որոշ վարդապետներից, այլ նրանց անոթների չափով լցրեց շնորհները, որպեսզի ամբողջ աշխարհը ճանաչի, որ միայն Աստված է անսխալ բնությամբ, իսկ մարդկանց մտքերը հեղիեղուկ են:



1 Եկեղեցական հայրերից, Սուրբ Գրքի լատեներեն թարգմանողը:

2 Օգոստինոս Երանելի (354-430), եկեղեցական լատին հայրերից, աստվածաբան, փիլիսոփա:

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐՔ ՄԵԿԸ ՄԵՂՔ Է
ԳՈՐԾՈՒՄ, ՏԱՆՋՎՈՒՄ Է ԴՐԱՆԻՑ,
ԱՅՍԻՆՔՆ՝ ՓՈՍ ՓՈՐՈՂՆ ԸՆԿՆՈՒՄ Է
ՆՈՒՅՆ ՓՈՍԻ ՄԵՋ՝**

Արուսյակը հպարտությամբ ցանկացավ բարձրանալ երկինք, Աստծուն հավասար աթոռ դնել ամպերի մեջ, բայց ամպերից ընկավ ցած՝ դժոխք: Դժոխքը հափշտակեց Եվային՝ խաբելով նրան, դավեր լարեց նրա դեմ և ուղղորդեց նրա չար միտքը: Նա կարող է հափշտակել նաև քեզ: Ինչպես չար սատանայի տենչն իր պատիժն է, նույնպես և ամեն մարդու պատիժն իր իղձն է: Մեկը հառաչում է ոսկու համար, բայց իրականում ի՞նչ է ցանկանում, եթե ոչ պատիժ ստանալ: Ովքեր ցանկանում են հարստանալ, ընկնում են փորձությունների մեջ, ինչպես Հուդա մատնիչը, որի պատիժը դարձավ արժաթասիրությունը: Մեկը ցանկանում է գեղեցիկ կնոջ, կորցնում է հանգստությունը:

Արիստիպոսն ասել է՝ Եթե տգեղ կին առնես, կզղջաս, իսկ եթե գեղեցիկ կին առնես, կլինի հասարակությանը: Մեկը ցանկանում կամ փքվում է գեղեցկությանը, այդ գեղեցկությունը նրա համար կլինի դժոխք և պատիժ, ինչպես Աբիսողոմը, որ ոսկով էր

1 Թարգմ.՝ Գևորգ սրկ. Միրզոյան:

փքվում և կախվեց (*Բ Թագ. ԺԸ 9-18*): Այս պատճառով եկեղեցու վարդապետներն ասում են, թե Աստված Ինքը խայթոց չունի մեղուների թագավորի նման, այլ մեր մեղքերի՛ց կհանի պատիժը: Ոսկեբերանն ասում է. «Որտեղ մեղքերի աղբյուրն է, այնտեղ են նաև տանջալից հարվածները»:

Ով սուր է վերցնում, սրից էլ ընկնում է (*Մատթ. ԻԶ 51-52*): Մի թագավոր թունաբեր գինի պատրաստեց իր հոր համար, բայց ինքը ծարավելով եկավ տուն և չիմանալով խմեց գինին, որով սպանել էր հորը, և նույն գինուց էլ չարաչար մահացավ: Մի մարդ նետ շինեց և հարվածեց մեկին, վերջինս հանեց նետն իր վերքի միջից և հարվածեց ու վիրավորեց իրեն վիրավորողին: Եվ ասաց նետ պատրաստողը. «Վա՛յ ինձ, որ կրում եմ վերքերն իմ պատրաստած նետից»:

Նիկողայոսը կամենում էր երիտասարդ հասակում սպանել Մեծն Ալեքսանդրին, սակայն սպանվեց Ալեքսանդրից ասպարեզում, կառամարտի ժամանակ, որի համար այս առակը պատմեցին. «Ով իր ընկերոջ համար չարը կամ վատն է կամենում, հենց իր համար է կամենում»: Չար խորհուրդն ավելի չար է դրա մասին խորհողի՛ համար: Նույնն է ասում և Ոսկեբերանը. «**Երբ որոգայթ ես լարում մեկի դեմ, այն նախևառաջ քո դեմ ես լարում**»: Այսպես Հովաբը, բարեկամական համբույրի պատճառով սպանելով քաջագույն զորապետներ Ամեսային և Աբեներին, նույն ձևով նաև ինքը բերվեց սեղանի առաջ և Սողոմոնի թագավորության խաղաղ շրջանում սպանվեց հենց նրա կողմից (*Բ Թագ. Ի*): Մեծն Ալեքսանդրը

ծխով սպանեց մեկին իր տանը, և երբ հարցրին սպանելու պատճառը, ասաց. «Ծխով սպանեցի, որպեսզի ծուխը վաճառեմ ուրիշներին»: Ոմն Դիդեմոնի շնանալիս բռնելով՝ Դիոզենեսն ասաց. «Արժանի է, որ իր անվանը համապատասխան կախվի, այսինքն՝ երկու վկաներով, քանի որ Դիդեմոն նշանակում է «երկվորյակ»: Այս մասին բավարարվենք Դավթի խոսքերով, ըստ որի՝ **«իրենց ձեռքերի գործերով կկապվեն մեղավորները»** (Մատթ. Թ 17):



ՀԱՎԱՏԻ ՈՒԺՈՎ ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԻՅ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ՝

Պետրոս առաքյալը հավատից հեռացածների համար ասում է, թե ավելի լավ էր, որ նրանք չճանաչեին արդարության ճանապարհը, քան թե ճանաչեցին և հեռու մնացին սուրբ պատվիրաններից, որ ավանդվեց նրանց: Այդպիսիք շան նման դառնում են իրենց փսխածին և լվացված խոզի նման թավալվում են տիղմի մեջ (Բ Պետր. Բ 22): Նրանք նաև նման են խրայելացիներին, որոնք, մինչ Աստված Սինա լեռան վրա պատվիրում էր՝ քեզ համար որևէ բանի նմանությամբ կուռքեր չշինես, ոսկե հորթը պատրաստելով՝ երկրպագում և ասում էին. «Սրանք են քո աստվածները, Իսրայել, որ հանեցին քեզ եգիպտացիների երկրից» (հմմտ. Ելք Ի):

Ճշմարիտ էր Մովսեսի խոսքը, որ նրանք մի խորհրդակորույս ազգ են, որովհետև տակավին շատ ժամանակ չէր անցել, որ տեսել էին Աստծու մեծամեծ բարերարությունները, եգիպտացիների տասը պատիժները և Կարմիր ծովի միջով ոտքով անցնելը, բայց արագ մոռացան ամեն ինչ, որի համար էլ Ղևիի որդիներից երեք հազար մարդ սրով ընկավ (Ելք ԼԸ 28): Այսպես Հովաս արքան չար իշխանների խրատով

1 Թարգմ.՝ Ռուբիկ սրկ. Արգումանյան:

դարձավ կռապաշտության և սպանեց բարի խրատատու Զաքարիա քահանայապետին: Հաջորդ տարի Աստված բոլոր իշխաններին մատնեց ասորեստանցիների սրին, իսկ ինքը՝ Հովասը, չարաչար հիվանդանալով, չար մահով սպանվեց իր ծառաների կողմից (*Բ Մնաց. ԻԴ 17*): Այսպես Հուլիանոս Ուրացողը¹ սատկացվեց պարսիկների կողմից: Եվ ով լքեց քառասուն մանուկների շարքը, մահացավ բաղնիքում:

Հիմենեսն ու Ալեքսանդր դարբինը Պողոսի կողմից մատնվեցին սատանայի ձեռքը, քանզի նավաբեկվեցին հավատի մեջ: Պիղծ Մանիքոսը² ողջ-ողջ քերթվեց, որովհետև պարսից արքայի որդուն բուժելու փոխարեն սպանեց նրան: Այդպես պատժվում են և պատժվելու են բոլոր նրանք, ովքեր կամենում են ամեն միտք համապատասխանեցնել իրականությանը: Քանզի ըստ Ոսկեբերանի՝ միտքն ամեն տեսակ խնդիրներ է հարուցում, որոնք կարող են նավաբեկության տանել: **Հավատը հուսալի է, ինչպես մի ամուր նավ, և ովքեր այնտեղից դուրս են ընկնում, կարող են խորտակվել:** Կային ոմանք, որ Պողոսի ժամանակներում Ավետարանից դուրս ուրիշ բաներ էին ուսուցանում, որովհետև քննում էին Ավետարանը, հեռանում էին հավատից, քանի որ իրենց մտքի բարբաջումներն էին ցանկանում հաստատել: Ով նավաբեկ է լինում, զրկվում է ամեն ինչից, և ով հավատից է գայթում, չունի ոչինչ և չի գտնի կառչելու որևէ բան: Եթե անգամ ինչ-ինչ կեղծավոր կամ նույնիսկ ճշմարիտ վարք ունենա, ոչ մի օգուտ չի լինի, որով-

1 Հռոմի կայսր (361-363):

2 Մանիքեական աղանդի հիմնադիրը (III դ.):

հետև երբ գլուխն ապականվի, ի՞նչ շահ մյուս անդամներին, քանզի եթե հավատն առանց վարքի պիտանի չէ, առավել ևս որքա՞ն անպիտան են առանց «հավատի գլխի» բարի գործերը: Երբ մեկը հավատից ընկնի, այլևս հաստատուն չի լինի, այլ կալեկոծվի, կտարութերվի, մինչև որ կխորտակվի, որոնց մասին ասվում է. «Մատնեցի սատանային, որ սովորեն չհայհոյել» (*Ա Տիմ. Ա 20*):

Գոյություն ունեն բազում այլ օրինակներ, թե ինչպես պատժվեցին նորաբույս մտածողների հետևորդները: Արիոսի աղանդից Եբդիմիոս ջատագովը բաղնիքում կաքավել էր տալիս Օլիմպիոսին, և երբ սա հարցրեց, թե ինչ բան է Երրորդությունը, Եբդիմոսն ասաց. «Ահա ես էլ ունեմ երրորդություն»: Աստծու վրեժխնդրությունն իսկույն հասավ նրա վրա, քանզի երբ դեռ նոր էր մտել բաղնիք, աղաղակելով դուրս վազեց և ասաց. «Ողորմեք ինձ», իսկ հարցնողներին՝ ի՞նչ պատահեց քեզ, ասում էր. «Տեսա գմբեթի վրայով քայլող պայծառ զգեստներ հագած մի մարդու, որն ինձ վրա երեք թաս եռացրած ջուր լցրեց և ասաց՝ Մի՛ հայհոյիր: Մինչ նրան վերցրին արիոսական եկեղեցի տանելու համար, ամբողջ մարմինը ծվեն-ծվեն եղավ, և այդպես սատակեց չար մահով: Այսպես է պատահում նաև նրանց հետ, ովքեր ասում են, թե իրենք Երրորդություն չեն ճանաչում, այլ Աստծուն հավատում են այնպես, ինչպես որ կա: Քոնն է վրեժխնդրությունը, ո՛վ Սուրբ Երրորդություն, այժմ ևս ցոյց տուր Քո ամենագոր կարողությունը, որ Քո թշնամիները տեսնեն ու ամաչեն:

Անթոնետոս անունով մեկը սուրբ Հովհան Ռսկեբերանից լսեց, թե Սուրբ Երրորդությունն է մեզ տալիս տարվա բերքը, սակայն հակառակվելով ասաց. «Ոչ թե Քրիստոս, այլ աշխարհի տարերքներն են ըստ ժամանակի պտուղ առաջ բերում աստվածների օգնությամբ»: Դեռ չէր ավարտել խոսքը, երբ դիվահարվելով ընկավ գետնին, գոռում էր արտասվելով և աչքերն այս ու այն կողմ էր շրջում, ատամներն էր կրճտացնում ու բերանից այստեղ ու այնտեղ փրփուր թափում, մինչև որ սրբի աղոթքով ազատվեց ու հավատաց Քրիստոսին:

Տեսնո՞ւմ ես, որ այսպիսի բաները մտքով քննելը և հավատը մտքում ծանրութեթև անելը հայհոյություն են: Անհավատներին իրենք՝ առաքյալներն էին խրատում, ինչպես Պողոսը՝ Էլիմաս մոզին, Պետրոսը՝ Անանիային և Սափիրային, իսկ հավատից շեղվածներին մատնում էին սատանայի ձեռքը, որովհետև սատանան նույնպես ակամա հնազանդվում էր առաքյալներին և նրանց հետևողներին: Իսկ սատանայի ձեռքը մատնվածների հետ ի՞նչ էր պատահում. այդպիսիք ժողովրդի միջից դուրս էին մղվում, հեռացվում էին հոտից, գրկվում էին շնորհներից, մատնվում էին դիվային գայլի ձեռքը, ինչպես, օրինակ, հրե ամպը հովանավորում էր եկեղեցուն, իսկ եկեղեցուց դուրս գտնվողը հրի էր մատնվում և տարագրվում էր առաքյալների շարքից:



ՄԱՏՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹

Լսում և անընդհատ տեսնում ենք (ճիշտ այնպես, ինչպես ասվում է իսրայելացիների մասին, թե ողջ ժողովուրդը լսում էր փողի ձայնը), որ ձեզնից շատերը թողել են Աստծուն և աներկյուղ են դարձել իրենց հոգիների կորստյան համար: Ոմանք արժաթասիրությունից դրդված մատնում են ուրիշներին, ինչպես Հուդան: Այդպիսիների պատիժը «վայն ու եղուկն» է՝ այստեղ և հանդերձյալ կյանքում: Հուդան արժաթասիրությունից դրդված մատնեց Տիրոջն ու Վարդապետին, որի համար մեր Տերը Պիղատոսին ասաց. «Նա, ով Ինձ քեզ մատնեց, նրա մեղքը մեծ է» (*Հովհ. ԺԹ 11*): Իսկ մեղքի մեծությանը հետևում է մեծ պատիժը, ինչպես ասել է Աստված. «Մեղքի չափի համաձայն են հարվածում ամբարիշտին»:

Կան մարդիկ, ովքեր իշխանատենչությունից դրդված են մատնում, ինչպես Սիմոն անունով մի փառասեր, ով Օնիա քահանայապետին մատնեց նախանձից դրդված, որպեսզի ինքը կարողանա քահանայապետ դառնալ: Այդպիսին էր ոմն փառամոլ Յասոն, որ Մելեկիոսի մահվանից հետո, երբ թագավորել սկսեց Երևելի կոչվող Անտիոքոսը, խոստացավ վաթսուն հազար կաշառք, իսկ եթե գործը հաջողվի, և

1 Թարգմ.՝ Հակոբ սրկ. Տեր-Սահակյան:

հարյուրը, ինչպես նաև նվաճել Երուսաղեմ քաղաքը, կառուցել թատրոններ: Անօրեն Անտիոքոսն ընդունեց Յասոնի բոլոր անօրենությունները: Բայց որպես դրանց դիմաց պատիժ՝ Աստված զրկեց նրան խնամքից, և անմիջապես Աստծու օրենքները հեթանոսության փոխվեցին (*Բ Մակար. 7*):

Իսկ ինչո՞ւ են մատնիչները պակաս Միմոն կամ Յասոն սուտ քահանայապետերից: Յասոն մատնիչը շուտով քահանայապետությունից ընկավ, և Մենելավոս անունով նրանից ավելի չար մի մարդ, որ կրկնակի պարգև էր խոստացել, նրանից կորզեց քահանայապետությունը:

Մատնիչը նման է աշյուծի առջևից գնացողի, որ կենդանիներին մատնում է աշյուծին, իսկ ինքը հագնում է աշյուծի շրթունքներից կաթող արյունով: Մատնիչ է Դովեկ Ասորին՝ Սավուղի ծառան, որ Դավթին հովանավորելու համար Աքիմելեք քահանայապետին մատնեց Սավուղին, և այդ օրը երեք հարյուր հինգ քահանայի կոտորեց (*Ա Թագ. ԻԱ 7*) ու նաև Նոմբա անունով քահանաների մի քաղաք բնաջնջել տվեց (*Ա Թագ. ԻԲ 18*): Ընդունենք, որ այդ արարքը կատարող Սավուղի ծառա Դովեկն ասորի էր և կռապաշտ, բայց ի՞նչ ասենք կեղծ քրիստոնյաների մասին, որոնցից ոմանք մատնում են եկեղեցին, ոմանք՝ իրենց հավատքը, ոմանք՝ դրացիներին. այդպիսի մարդկանց բաժինն է Հուդայի մահը և հավիտենական տարտաբորտը: Ուրեմն, սիրելիներ՛ր, զգո՛ւյշ եղեք մատնությունից: Իմացե՛ք, ում որ մատնեք կամ փորձության առաջ կանգնեցնեք, նույն չափով էլ պատժի կարժանանաք:

Իսկ մեծագույն մատնությունը բարեկամի խորհուրդները բանասարկելն ու նրան թշնամիներին մատնելն է, նաև քրիստոնեական խորհուրդն այլազգիներին մատնելը, քրիստոնյայի կերպարանքով Քրիստոսի խաչի թշնամիներին ջատագովելը, որ նման է խոզերի առաջ մարգարիտներ շաղ տալուն (Մատթ. Է 6): Այսպիսի մարդիկ նման են Սադայելին, որը միշտ չարախոսում է Աստծու ծառաներին իրենց Տիրոջ առջև: Եվ երանի թե այսպիսիներին Աստծու առջև չարախոսեին: Ո՛վ գիտե սուտն ու ճիշտը տարբերել, չլսել չարախոսներին, այլ օգնել իր ծառաներին: Բայց այդպիսիք նախանձի պատճառով են մատնում, սակայն ստում են, թե լավություն անելու համար են անում դա: Սրանք նման են ամբարիշտ Ներոնին, որը, կամենալով սպանել իր ուսուցիչ Սենեկային, կարգադրեց դառը մահվամբ չսպանել նրան, այլ բաղնիք տանել և երակները կտրել, որպեսզի արնաքամ լինելով շուտ մահանա:

Այդ պատճառով, սիրելիներ, հեռու մնացեք մատնությունից՝ գիտենալով, որ ում մատնեք և փորձության մեջ գցեք, դրանով ձեզ համար մեծ պատժի պատճառ կդառնաք:



ԳԵՐԻՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Պլատոնի աշակերտ Քսենոկրատեսը² գնաց Անթիպատրոս³ արքայի մոտ՝ գերիներին ազատելու: Արքան սիրով ընդունեց նրան, մեծ սեղան բացեց և երբ հրավիրեց փիլիսոփային, վերջինս ասաց. «Այդ ո՞ր խոհեմ և ողջամիտ մարդը կցանկանա ճաշակել և ըմպել, քանի դեռ չի ազատել իր ընկերներին»: Թագավորը զարմացավ և հենց նույն պահին հրամայեց ազատ արձակել գերիներին:

Արդ, ի՞նչ խղճով ու հանգստությամբ պետք է ճաշակենք Տիրոջ մարմինն ու արյունը երկնավոր սեղանից, երբ գերյալ են մեր եղբայրները, և կցանկանա՞նք արդյոք սեղան նստել Քրիստոսի հետ՝ առանց մեր եղբայրների ընկերակցության: Մինչև Աբրահամ նահապետը չազատեց Մելքիսեդեկի գերիներին, չարժանացավ Քրիստոսի Մարմնի և Արյան խորհրդանիշ հացին և գինուն: Մինչև Մովսեսը չսպանեց եբրայեցուն կյանքից գրկող եգիպտացուն, չկանչվեց Աստծու կողմից՝ բոլոր եբրայեցիների համար փրկիչ լինելու: Այժմ մենք մեր փրկության համար իսկ չենք կամե-

1 Թարգմ.՝ Հովհաննես սրկ. Գալստյան:

2 Անտիկ հույն փիլիսոփա (396-314):

3 Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանակ Մակեդոնիայի տիրակալ (Ք. ա. 334-319 թթ.):

նում օգնել և ազատել գերեվարողներից մեր գերյալ եղբայրներին: Վա՛յ ինձ. կգտնվեն նաև ուրիշները, որ այլազգիներից ազատելով գերիներին՝ կդարձնեն մեղքի և ախտերի գերի:

Ոմանք, անմիտ գաղատացիների պես սկսելով հոգով, ավարտեցին մարմնով (*հմմտ. Գաղատ. Գ 3*): Ոմանք էլ, չկարողանալով գերիներին իրենց պիղծ ախտերին կամակից դարձնել, վաճառեցին նրանց այլազգիներին: Այսպիսիք նման են Հովսեփի եղբայրներին, ովքեր նրան վաճառեցին իսմայելացիներին: Ուրեմն իմացի՛ր այսպիսիների պատիժը. «Եթե մեկը գողանա մի իսրայելացու և վաճառի, կամ իր մոտ գտնեն նրան, ապա սա մահապատժի թող ենթարկվի» (*Ելք ԻԱ 16*):

Ի՞նչ բարեգործություն արեց Աբդիմեկեք Եթովպացին, որ Աստված փրկեց նրան գերությունից և չզցեց նրան քաղղեացիների ձեռքը (*Երևմ. ԼԹ 16*): Կամ ո՞վ հանեց Երեմիային տղմալի գբից՝ Սեղեկիա արքային ասելով. «Տե՛ր իմ արքա, չարիք գործեցին Երեմիա մարգարեի հանդեպ՝ զցելով նրան գբի մեջ. նա ցածում մեռնում է սովից, և քաղաքում էլ հաց չկա» (*Երևմ. ԺԸ 9*): Ո՞վ հրաման ստանալով գնաց և հանեց մարգարեին գբից: Բայց զարմանալի է, ինչպես ասաց Աբդիմեկեքը՝ «քաղաքում հաց չկա». մի՞թե Երեմիան կվերացնի սովը: Միգուցե: Աբդիմեկեքը մտածում էր Աստծու խոսքի մասին՝ իբրև հացի՝ տրված Երեմիայի միջոցով, քանզի Աստծու խոսքի սով էր:

Իմացի՛ր, ինչպես Աբդիմեկեքը, գերյալ անմեղ մարգարեին հանելով գբից, ազատվեց քաղղեացիներ-

րի գերությունից, այնպես էլ նրանք, որոնց շնորհիվ հավատակիցները կազատվեն գերությունից, գերծ կմնան քաղղեացի դևերի գերությունից:

Քրիստոս մեզ գնեց Իր արյամբ, իսկ մենք չենք կամենում գնալ և ազատել մեր եղբայրներին գոնե դրամով: Հույժ ողորմած էր իսպանացի սուրբ Պողոս եպիսկոպոսը, որը ողորմության վրա սպառեց իր ողջ ունեցվածքը: Մի այրի կին, որի որդին Աֆրիկայում գերի էր, եկավ եպիսկոպոսի մոտ և խնդրեց տալ իր որդու փրկագինը: Բայց նա ոչինչ չունեւր և կնոջն ասաց. «Ոչինչ չունեմ, բայց իմ անձը կտամ՝ իբրև որդուդ փրկագին», և երդումով հաստատեց այդ խոսքը: Կինը վերցրեց եպիսկոպոսին և գնաց Աֆրիկա, գտավ որդուն և ասաց թագավորի փեսային, որ գերուտերն է. «Այս մարդուն վերցրո՛ւ իմ որդու փոխարեն և ողորմի՛ր ինձ ու ե՛տ տուր իմ միամորիկ որբուկին»: Ուրախացավ թագավորի փեսան. ի՛նչ հաջողություն: Հարցրեց՝ ի՛նչ է անունդ, և նա ասաց. «Հանուն Քրիստոսի՝ քո ծառա Պողոս»: Արդյունքում փեսան գերի վերցրեց եպիսկոպոսին այրու որդու փոխարեն, և նրա խոսքերը լսելով՝ խիստ իմաստուն համարեց նրան: Եպիսկոպոսն օրեր անց մարգարեացավ Անտալուս թագավորի մասին նրա փեսայի մոտ. «Այսինչ օրը քո աներ-թագավորը պատերազմում կմեռնի, և դու կդառնաս թագավոր»: Փեսան գնաց և լուրը ծածուկ հայտնեց թագավորին: Թագավորն ասաց. «Կամենում եմ այդ մարդուն տեսնել»: Փեսան ասաց. «Վաղը խորտիկ կբերի սեղանի մոտ, այն ժամանակ կտեսնես»: Այդպես էլ եղավ: Թագավորը սոսկաց, երբ

տեսավ երանելուն, ապա փեսայից գաղտնի հարցրեց նրան. «Հայտնի՞ր ինչ որ ասել ես իմ փեսային, այլապես իսկապես այդ պատահելո՞ւ է թագավորի հետ»: Ապա ասաց թագավորն իր փեսային. «Այս գիշեր մի երազ տեսա. իշխանները նստել էին ինձ հետ, իսկ սա՝ նրանց հետ՝ գավազանը ձեռքին. ես չեմ հավատում, որ այս մարդն աշխարհական է, ճշտի՞ր դա»: Հարցրեց նրան, և նա ասաց. «Եպիսկոպոս եմ», և մեկ առ մեկ պատմեց եղելությունը: Անտալուս թագավորը, նրա ոտքերն ընկնելով, ասաց. «Թողություն տուր, հայր, և ինչ որ խնդրես, լիովի կտամ»: Սուրբն ասաց. «Քեզնից մի բարի պարգև եմ խնդրում, և կարող ես տալ, եթե կամենաս: Իտալիայի բոլոր գերիներին, որոնք գտնվում են քո իշխանության տակ, ազատ արձակիր»: Թագավորը կատարեց նրա խնդրանքը՝ ազատելով բոլոր գերյալներին և նրանց հետ նաև եպիսկոպոսին:

Սուրբ Պողոսն այդպիսով նմանվեց Քրիստոսին, որ ծառայական կերպարանքով ազատեց մեզ գերությունից: Ինչպես Քրիստոս միայնակ իջավ դժոխք և բազմությամբ ելավ այնտեղից, այնպես էլ այս սուրբ Պողոսը միայնակ մտավ ծառայության և շատերին ազատեց ծառայությունից:

Տեսա՞ք գերիների փրկողին, ո՛վ եղբայրներ, որ կամավոր գերի եղավ և շատերին ու իրեն ազատեց: Այդպես և նրանք, **ովքեր սուրբ Պողոս եպիսկոպոսի նման գերիներին են ազատում, միաժամանակ իրենք են ազատվում գերությունից:**



ԱՆԴԱՄԱԼՈՒՅԾՆԵՐԻ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Ավետարանի 38-ամյա խեղճ անդամալույծն ասաց Քրիստոսին. «Տե՛ր, մեկը չունեմ, որ պեսզի ջրերը խառնվելիս ինձ ավազանն իջեցնի»:

Ողորմեց գթասիրտ Քրիստոս Աստված և ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ քո տունը» (*Հովհ. Ե 7-8*):

Արդ, եթե մենք չենք կարող այդպիսի նշան կատարել, կարող ենք գոնե շարժել Պրոպատիկե ավազանի ջուրը և կամ օգնել անդամալույծներին՝ իջեցնելով նրանց զովացուցիչ ջուրը: Այս ողորմությունը հրեշտակային և մանավանդ աստվածային գործ է, որը մարդիկ զանց էին առնում՝ խուսափելով խեղճ անդամալույծներին խնամելուց: Հրեշտակն էր ջուրը շարժում, իսկ Քրիստոս՝ բժշկում:

Ամեն մի մեղավոր անդամալույծ է Աստծու առաջ և կարոտ Աստծու շնորհների նախաշարժմանը, հետևապես կարոտ է Քրիստոս Աստծուց բժշկվելու: Հակառակ դեպքում մեղավորը կմնա որպես անտերունչ անդամալույծ: Եվ այդ դեպքում նույնիսկ կարիք չի լինի ասելու. «Տե՛ր Հիսուս, ոչ ոքի չունեմ, որ

1 Թարգմ.՝ Միհրան Աշուրյան:

շնորհներիդ ջուրը շարժվելիս ինձ իջեցնի ավազանը՝ բժշկվելու համար: Դու գթա՛ և բժշկի՛ր ինձ, քանզի ոչ թե տաճարի գեղեցիկ դռան մոտ նստած անդամալույծի նման խնդրում եմ Պետրոսից և Հովհաննեսից ոսկի կամ արծաթ, այլ խնդրում եմ Քո ողորմությունը, որպեսզի ինձ հրամայես. «Վեր կաց, ա՛ն քո մարմնի մահիճը և գնա արքայության տունը»»:

Արդ, եթե այդպիսի ավետյաց ձայնի սպասելիս լինեք, ո՛վ հավատացյալներ, ապա խղճալի անդամալույծներին մի՛ անտեսեք ձեր ողորմությունից: Մի՛ ասեք, թե նրանք մեղքերի պատճառով են այդպես եղել, ինչպես այն երեսունութամյա անդամալույծը: Եվ ով մեղքերի համար է տանջվում, պետք չէ՛ արդյոք նրան ողորմել: Վա՛յ ինձ, մի՛թե աշխարհիս վրա կգտնվի գոնե մի այնպիսի մարդ, որ այդպես է մտածում: Մի՛թե դու հոգով անդամալույծ չես և ինչո՞ւ ես Աստծուց ողորմություն խնդրում:

Արիստոտելը մի չարագործի ողորմություն տվեց, և երբ հարցրին՝ ինչի՞ համար չարագործին ողորմեցիր, նա պատասխանեց. «Մարդկային բնությանը ողորմեցի, ոչ թե չարագործությանը»: Եվ մի՛թե բոլոր անդամալույծները մեղքերի պատճառով են այդպես լինում, և ոչ թե Աստծու փառքի համար: Այն տերը, որ ծառային հարվածում է, առիթ չի՛ տալիս արդյոք, որ ծառայակիցն էլ նրան հարվածի: Դավիթն ասում է. «Ում որ դու հարեցիր, նրանք կհալածվեն, և իմ վերքերի ցավերը կավելացնեն» (*Սաղմ. ԿԸ 27*): Աստված քեզ իրավունք է վերապահել նրանց ողորմելու և ոչ թե նրանց մեղքերը դատելու:

Աստված Բաբելոն գերված իսրայելացիների մասին ասում է. «Մեղքերի պատճառով սակավ ժամանակ տրտմություն հասցրեցի նրան, բայց նրա սրտի ճանապարհները տեսա և բժշկեցի» (Եսայի ԾԷ 17): Իսկ դուք, ձեր սրտի տգիտությունը ծածկելով, դարձյալ խեղճերին վիրավորում եք ավագակների օրինակով՝ նրանց վերքերի վրա վերքեր ավելացնելով, թողնում եք նրանց կիսամահ և գնում: Եվ մի՞թե Աստված չբարկացավ անողորմ մարդկանց վրա, որոնք ողորմություն չէին անում փորձության մատնվածներին: «Ես,- ասում է,- բարկացել էի նրանց վրա և մատնեցի նրանց քո ձեռքը, բայց դու չողորմեցիր նրանց» (Եսայի ԽԷ 6): Սա ասաց բաբելոնացիներին, որոնք չէին ողորմում գերյալներին: Ուստիև ասում է. «Ձեզ կմատնեն պարսիկների ձեռքը, որոնք չեն խնայի ձերերին, մանուկներին, կույսերին»: Ուրեմն եթե կամենում եք այսպիսի սարսափելի վճիռ չսեղ Աստծուց, ողորմացե՛ք այն խղճալի մահամերձ մարդկանց ամենագուրթ Տեր Հիսուսի նմանությամբ, և Նա Ինքը ձեզ կողորմի:



ՄԱՀԱՅԱԾՆԵՐԻ ՎՐԱ ՀԵԹԱՆՈՍԱԲԱՐ ԼԱՅ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝

Մինչ Սոլոն իմաստասերը² լալիս էր մահացած որդու համար, բարեկամներն ասացին. «Ինչո՞ւ ես լաց լինում, եթե ոչինչ չես շահում»: Եվ նա ասաց. «Ես հենց այդ պատճառով էլ լաց եմ լինում, քանի որ ոչինչ չեմ շահում»: Նա հեթանոս էր, գիտեր, որ ոչինչ չի շահում, ուրեմն քրիստոնյաներն ինչի՞ համար պետք է ողբան, երբ գիտեն, որ իրենց մեռելները վաստակում են հավիտենական կյանքը:

Ողբալի է այն կյանքը, որի վրա լալիս է Քրիստոս. տեսնելով քաղաքը՝ լաց եղավ նրա վրա, բայց ուրախացավ Ղազարոսի մահվան համար. «Ղազարոսը մեռավ, բայց Ես ուրախ եմ» (*Հովհ. ԺԱ 14-15*),- ասում է Տերը: Միրաքն ասում է. «Մեռելի վրա սուգը յոթ օր է, իսկ անմիտ և ամբարիշտ մարդու համար՝ իր կյանքի բոլոր օրերը» (*Միրաք ԻԲ 12*): Մեռելի վրա լաց եղիր, որովհետև պակասեց նրա լույսը, լաց եղիր նաև հիմարի՛ վրա, որովհետև պակասեց նրա խելքը: Քիչ լաց եղիր մեռելի վրա, որովհետև նա հանգստացավ, քանի որ չար մարդու կյանքն ավելի վատ է, քան հիմարի մահը: «Նա, ով հարության հույս ունի, ինչպե՞ս կարող է

1 Թարգմ.՝ Ռուբեն սրկ. Կարապետյան:

2 Հույն անտիկ պետական գործիչ, օրենսգիր և բանաստեղծ (թ. ա. 638-558 թթ.):

լաց լինել մեռելի վրա և երկնչել մահվանից», - ասում է Ոսկեբերանը:

Եթե արդարների մահը մեկ այլ՝ երկնային կյանքի ծնունդն է, և եթե մահն արդարների ննջումն է, ուրեմն ինչո՞ւ ես լալիս հուսահատված: Տե՛ս՝ ինչ է ասում Պողոս առաքյալը. «Այս եմ ասում ննջեցյալների մասին, որ չտրտմեք, ինչպես հեթանոսները, որոնք չունեն հարության հույսը: Մի՞թե նրանք, ովքեր ննջեցին ի Քրիստոս Հիսուս, կորա՞ն արդյոք (*Ա Թեսսալ. Դ 12*): Քավ լիցի: Եթե միայն այս կյանքի համար ենք Քրիստոսի վրա հույս դրել, ապա ողորմելի ենք բոլոր մարդկանց մեջ» (*Ա Կորնթ. ԺԵ 19*): Քուրդ ազգն այն մեռելի վրա է լալիս, որն անկողնում է մահացել, իսկ նա, ով ձիու վրա քաջությամբ է մեռնում, նրա մասին երգեր են հորինում և միշտ գովերգում:

Դու լաց եղիր այն մեռելի վրա, ով, մեղքերի անկողնում ննջելով, մեղքերի մեջ է մեռնում, և ոչ թե նրա վրա, ով, քաջաբար կոխորտելով աշխարհը, մարմինն ու սատանային, հաղթանակած ու բարիք գործած ձիավորի պես է Աստծու մոտ գնում:

Արդար աղջկա՝ Տալիթայի մասին Քրիստոս ասաց. «Լաց մի՛ եղեք, քանի որ այդ աղջիկը մեռած չէ, այլ ննջում է» (*Մատթ. Թ 24*): Եվ նրան մեռելներից հարություն տվեց: Ուրեմն ամեն մեկը, ով արդարությամբ է մեռնում, Քրիստոսի կողմից հարություն կառնի անմահական կյանքի համար: Ոսկեբերանն ասում է, որ ամաչում է հրեաներից ու հեթանոսներից, երբ վերջիններս տեսնում են մեռելների վրա անհույս լացող քրիստոնյաներին, քանի որ երբ այնուհետև խոսում ենք հարության մասին, ծաղրում են մեզ ու ասում. «Եթե սրանք հավատային հարությանը, մեռելների

վրա այդպես անհուսաբար լաց չէին լինի: Սրանցից ո՞ր մեկը կարող է արհամարհել մահը, եթե ուրիշների մահն անգամ չեն կարող տանել»:

Հապա հարցնում են քեզ՝ ի՞նչ են խորհրդանշում վառված կանթեղներն ու մոմերը. արդյոք ո՞չ այն, որ իբրև վկաներ ենք ճանապարհում մահացածներին: Իսկ ի՞նչ են օրհնությունները. արդյոք Աստծուն չե՞նք փառավորում, որ այսուհետև պսակեց գնացածներին և ազատեց չարչարանքից, դուրս հանեց անհայտ աշխարհից և Իր մոտ անարատության մեջ պահեց: Իսկ ի՞նչ են ցույց տալիս սաղմոսները, եթե ոչ այն, որ մեկը, սրտի ուրախությունը հայտնելով, կբերկրի ու սաղմոս կասի: Ուշադրություն դարձրու այդ ժամանակ երգվող սաղմոսին. «Դարձիր,- ասում է,- անձ իմ, դեպի քո հանգիստը, որովհետև Տերը բարիք արեց քեզ» (Մատթ. ԸԺԴ 7): **Վայ ինձ, Աստված բարիք է անում ննջեցյալին, իսկ դու նախանձոտ թշնամու պես լալիս ես** այդ բարիքին արժանացած մեռելի վրա:

Եթե Պողոսն ազահներին կռապաշտներ է անվանում, ուրեմն որքա՞ն առավել այդպիսին են նրանք, ովքեր կռապաշտի անհույս գործն են անում: Կանչում ես երեցներին՝ ննջեցյալիդ պատվով Աստծու մոտ ուղարկելու համար, բայց կանչում ես նաև հասարակաց հարությունը կասկածի տակ դնող լացուկո՞ծ անողներին. մեկն օրհնում է, իսկ մյուսը՝ անիծում. Աստված ո՞ր մեկին լսի: Դու ասում ես՝ վայ, իսկ Սուրբ Հոգին ասում է. «Երանի մեռելներին, որոնք ի Տեր ննջեցին»: Ո՞չ աստվածասեր ջերմեռանդությանդ եմ հավատում, ո՞վ քրիստոնյա, ո՞չ էլ քրիստոնեության ձևի տակ քողարկված կռապաշտական շարժումներիդ:

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՒԷ Է ԱՍՏՎԱԾ ԱՅՍ
ԿՅԱՆՔՈՒՄ ՈՄԱՆՑ ՊԱՏԺՈՒՄ,
ԻՍԿ ՈՄԱՆՑ՝ ՈՉ¹**

Աստված, լինելով խիստ արդար, թույլ է տալիս այս աշխարհից առանց պատժի հեռանալ գողերին, մարդասպաններին և այլոց և միևնույն ժամանակ բարեպաշտներին թողնում է խեղճության մեջ մահանալ: Գուցե ոմանք զարմանան սրա վրա: Ուրեմն ասեմ, որ Աստված իր անքննելի դատաստանի համար այստեղ ամենքի՛ն չի պատժում, այլ միայն ոմանց, իսկ ոմանց պահում է այնտեղի՛ համար: Քանի որ **եթե Աստված բոլոր մեղավոր մարդկանցից վրեժ լուծեր այստեղ, տգետները և անբանները կասեին, թե այլևս չկա հանդերձյալ կյանք և ահեղ դատաստան:** Իսկ եթե ոմանց չտանջեր և չպատժեր այս կյանքում, գուցե որոշ բթամիտներ կարծեին, թե Աստված չի տեսնում և չի հասկանում այն ամենը, ինչ մենք այստեղ անում ենք, և այդպես կխրվեին անասելի մեղքի և չարիքի մեջ: Եվ կամ ոմանց այս կյանքում թույլ է տալիս վայելել մասնավոր բարիքը՝ իրենց գործած բարության չափով, ինչպես հարուստին է ասվում. «Դու ստացա՛ր քո բարիքը քո կյանքի ընթացքում»:

1 Թարգմ.՝ Ազատ սրկ. Մաղաքյան:

Իսկ արդարներին խնայելով՝ տեղափոխում է այս աշխարհից, որ ազատվեն գալիք չարիքից, շուտափույթ հասնեն հավիտենական կյանքին և հանկարծ չապականվեն՝ չարի մեջ բնակվելով:

Հունձքի համար սահմանված օրը դատաստանն է. այդ օրը նախ քաղել և դժոխք նետել կտա որոմը, ապա ցորենը կհավաքի շտեմարաններում:



ԺԱՆՏԱԽՏԻՅ ՈՒ ՄԱՀԻՅ ՄԻԱՅՆ ԱՂՈՌՔՈՎ ԵՎ ԶՂԶՄԱՄԲ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱԶԱՏՎԵԼ¹

Եզեկիա բարեպաշտ թագավորը հիվանդացել էր ժանտախտով, որովհետև գոհություն չէր տվել Աստծուն ասորիների գորքին կոտորելու համար: Երբ նա լսեց Եսայու խոսքերը, իր երեսը դարձրեց տաճարի կողմը, աղոթքի կանգնեց սթափ մտքով, և դրա շնորհիվ Աստված կանխեց նրա մահը և շնորհեց նրան 15 տարվա կյանք (*Եսայի ԼԸ 1-9*):

Հնագույն մի սովորություն կա, որ ժանտամահի ժամանակ կանգնում էին Աստծու սեղանի առջև՝ ի պատիվ սրբերի: Այդպես մի ժամանակ Հռոմում ծանր մահտարաժամ սկսվեց. բարի և չար հրեշտակները գնում, բախում էին դռները, և առավոտյան այդ տանը մեռածներ էին լինում: Այդ ժամանակ Աստծու ծառան հայտնեց, թե մահը չի վերանա, եթե այրոռանիստ եկեղեցում, ուր բանտարկվել էր Պետրոս առաքյալը, Սուրբ Սեբաստիանի անվան սեղան չկանգնեցվի: Եվ ահա սրբերի մասունքները պտտեցնելով տարան դրեցին Սուրբ Սեբաստիանի սեղանի վրա, ժանտամահն անմիջապես դադարեց: Այդ աստիճան գորավոր են ժանտամահի ժամանակ նաև սուրբ Հակոբ

¹ Թարգմ.՝ Գևորգ սրկ. Չարենցավանցի Ստեփանյան:

Մծբնեցու և Անտիոքի Մակարիոս հայրապետների աղոթքները:

Նաև խաչի օծումն է ազատում մահից: Կա մի շատ լավ օրինակ: Երբ Քրիստափոր Կոլումբոսը հայտնաբերեց նոր աշխարհը, նրանց փողոցների անկյուններում տեսավ կանգնեցրած խաչեր և հարցրեց տեղացիներին՝ այս ի՞նչ նշան է, որին դուք պատվում եք: (Այն ժամանակ ընդունված էր մտածել, թե նոր հայտնաբերված երկրներում քրիստոնեություն չի եղել): Տեղացիներն ասացին. «Մենք նախնիներից լսել ենք, որ ժանտամահ է եղել այս երկրում: Մի ծերունի երագում լսել է, որ եթե ցանկանում եք՝ այդ մահը շուտափույթ վերանա, այս նշանն արեք տների դռներին, կանգնեցրեք ճանապարհներին և պատվով պաշտեցեք, և մահտարածամը կվերանա»: Իսկույն կատարեցին ասածը, և վերացան մահերը: Այդ ժամանակից մինչև այժմ չենք տեսել ժանտամահ այս երկրում: Բայց և այս նշանի Տիրոջը չենք ճանաչում»:

Եկվոր եվրոպացիները խաչը վերցրին և սկսեցին քարոզել Քրիստոսի հավատը և նրանց դարձի բերեցին արևապաշտությունից և այլ սնտաի կուռքերի մոլորություններից:

Մտածե՛լ եք, թե ինչու Գառան խաչանիշ արյունն արգելեց կոտորող հրեշտակին մտնելու Եգիպտոս՝ եբրայեցիների տները, և մեծ խաչի նշանով հեծե՛ծողներն ու Երուսաղեմի վրա հոգոց հանողներն ազատվեցին հրեշտակի կործանումից (Եզեկ. Թ 4):

«Ո՛վ Տեր Հիսուս Քրիստոս, Աստծու անմե՛ղ Գառ, որ մեր մեղքերի պատիժները Քեզ վրա վերցրեցիր

և խաչով ու արյամբ այս աշխարհը փրկեցիր, նույն կերպ հաստատակամ ես ներելու և խնայելու համար՝ զոհելով պատվական արյունդ հաշտության համար և վերցնելով մեր մեղքերը: Տո՛ւր մեզ, Տե՛ր, նոր սիրտ՝ քեզանից երկնչելու, մեղքերից հրաժարվելու և մեր հանցանքները ճանաչելու համար և Քո տված շնորհներով արժանի լինելու մեղքերի թողությանը, և հեռո՛ւ պահիր ժանտամահից, սովից և սվինահարության ու դժոխքի հավիտենական պատիժներից»:



ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴԺՎԱՐ Է, ԻՄԿ ՎԱՅԵԼՈՒՄԸ՝ ՀՐՃՎԱԼԻՑ¹

Աստված զույգ տախտակ սահմանեց, որոնցով մարդիկ կկարողանան ընթանալ դեպի արքայության հավիտենական նավահանգիստը՝ նավարկելով կյանքի ծովում:

Մեկն անմեղության տախտակն է, որով շատ քչերն են անցել՝ Երեմիան, Հովհաննես Մկրտիչը և Սրբուհի Աստվածածինը: Մակայն տեսնելով, որ այս տախտակով խիստ քչերն են փրկվում, Աստված հաստատեց երկրորդ «տախտակը»՝ ապաշխարությունը, որով փրկվում են նավաբեկյալները: Օրինակն այն նավն է, որով Պողոսը նավարկելով մտավ Հռոմ. թեև այն խորտակվեց, սակայն շատերը տախտակներով և լողալով փրկվեցին (*Գործք Է 43*):

Ահա սա է արքայության երկրորդ ճանապարհը, որով ոմանք «լողալով»՝ փրկվում են մկրտությամբ և անմեղ մահվամբ: Եվ շատերը փրկվում են ապաշխարության երկրորդ տախտակով, որը թեպետ դժվար է երևում, բայց վախճանը հրճվալի է: Այս է Եվայի երկունքը, ով ծնելով ասաց. «Մարդ ստացա Աստուծով» (*Ծննդ. Դ 1*): Ծնող կնոջ տրտմությունը սա է, սա-

1 Թարգմ.՝ Հակոբ սրկ. Մալխասյան:

կայն երբ ծնում է, այլևս չի հիշում ցավերը, որովհետև աշխարհում նոր մարդ ծնեց: Այս է երկյուղը, որով հղանում և ծնվում է փրկության հոգին: Այս է Դավթի ցանկացած անդորր ճանապարհը, ըստ որի՝ «Խիստ անդորր էին ինձ համար Քո պատվիրանները» (*Մադն. ճԺԸ 45*), այսինքն՝ ապաշխարության պատվիրանները, որոնք առժամանակյա նեղությամբ մեզ հավիտենական հանգիստ են տալիս: Այս է Քրիստոսի քաղցր լուծը և փոքրոգի բեռը, որ հավիտենական հանգիստ է պարգևում, քանզի այն դժոխքի տանջանքներից դարձնում է դեպի ցանկալի արքայության, և հենց դրա մասին է ասվում՝ ապաշխարողը պետք է ցավի ու ցավերի մեջ խնդա, իսկ եթե ցավ չգա, միշտ ցավերի մեջ կմնա:

Մսկանակների համար ապաշխարությունն այնքան դժվարին է թվում, որքան նրանց համար, ովքեր ցանկանում են ծովում լողալ. սկզբում սոսկում են, բայց մի անգամ թրջվելով՝ արդեն ոչինչ են համարում ջրի սառնությունը: Այսպիսին են նաև վաճառականներն արևի տապին և ցրտին. եթե շահում են, ոչինչ են համարում գրկանքները:

Երբ մեկը մուրացկանությունից դառնում է հարուստ վաճառական, մեկ ուրիշը հարցնում է՝ ինչպե՞ս հարստացար, սա պատասխանում է, թե սկզբում քիչ է վաստակել և գիշերները հսկելով շատացրել է, իսկ այժմ շահում է՝ անգամ գիշերները ննջելով: Սկզբում տանջվել է մեկ լումայի համար, իսկ հիմա չի տանջվում անգամ մեկ տաղանդի համար. «Փոքր-ինչ տանջվեցի, բայց մեծ հանգստություն գտա»:

Այս առիթով սուրբ Գրիգոր Պապն ասում է, թե **սկսնակների համար ապաշխարության ճանապարհը նեղ է, իսկ առաջադիմողների համար՝ լայն**: Ուլքեր մարմնի առողջության համար ընպում են դառն օշարակ, սկզբում նախ ընտելանում են, ապա սովորական ընպելիքներից այն չեն տարբերում: Այդպես էլ ապաշխարության օշարակն է, որը դյուրամարս է դառնում, երբ մեջը կիր ենք լցնում:

Մեկն իր ազնիվ բարեկամի կողմից հրավիրվեց նրա ընդարձակ և ծաղկալի պարտեզը: Նա, գնալով այնտեղ, տեսավ ավերված ցանկապատեր, պարտեզի մեջ՝ փշալի որոմներ: Հրավիրողը մոտ գալով աղաչեց որպեսզի նա մի քայլ ևս առաջ գնա: Մա առաջ գնաց և տեսավ, որ պարտեզի դռան վրա գրված է. «Ինչ որ փնտրում ես, ներսում է թաքնված»: Հայելին պարզ ցույց է տալիս միայն իր մեջ նայողին և ոչ թե կողքից նայողին: Այդպես էլ ապաշխարության վախճանը չի երևա, եթե նախ չճաշակես: Ապաշխարության պարտեզը հանգստացնում է ճաշակողին և տրտմեցնում հայհոյողին: Եթե ծույլին ուղարկես մի տեղ, նա իր ճանապարհին գայլերի կհանդիպի:

Ընկույզն ի՞նչ է. այն դառը կեղև ունի, սակայն ներսից քաղցր է, այսինքն՝ այն, ինչ փնտրում ես, կգտնես ներսում: Այսպիսին է ապաշխարությունը. սկսնակին թվում է դառը և տրտմալի (ինչպիսիք են ծոմապահությունը, աղոթքը, ողորմությունը և այլն), հեռվից այսպես է երևում, սակայն հավիտենական կյանքի հետ համեմատելով՝ այն դառնում է ունայն և ոչինչ:

Աջքով տեսածի համար միայն կարելի է երկյուղ կրել: Այդպես եթե նկարված առյուծի և օձի պատկերը շոշափես, երկյուղ չես ունենա, այլ միայն ներկը կզգաս: Նույնպես և ուլքեր երազի մեջ առյուծ են տեսնում, սոսկում և քրտնում են, բայց երբ արթնանում են, ժպտում են: Այսպիսին էր նաև երանելի Հորը, որ երազ էր համարում մարմնի բոլոր վշտերը՝ ասելով, թե Աստված երազներով զարհուրեցնում և հարվածում է իրեն (*Հոր Է 14*):

Իր ձեռքում ապաշխարություն ունեցող մարդն արջին և առյուծին հնազանդեցնում և սպանում է, ինչպես Դավիթն արեց: Հեշտասերներն ուտում են թագավորական սեղանից, սակայն հյուծվում են, բայց երեք մանուկները, ուտելով ընդդեմ, գեղեցկանում ու զորանում էին: Այսպիսին է ապաշխարության շնորհը: Ուխտավոր Սամսոնն առյուծ էր պատառոտում, իսկ հնազանդության օրենքն անտեսող մարգարեին առյուծն էր պատառոտում: Ապաշխարությունից վախեցողները նմանվում են տասը լրտեսներին, որոնք քանանացիների աջքին իրենց մորեխ էին ձևացնում, այսինքն՝ ոչնչություն: «Տեսանք Ենակի ազգը և նրանց մոտ մեզ ձևացրինք իբրև մորեխներ», բայց Հեսուն և Քաղերը խաղողի ողկույզ և նուռ բերեցին լծակով և չերկնչեցին թշնամիների մեծությունից (*Թվեր ԺԳ 24*): «Մենք մեր թշնամիներին կարող ենք հաղթել, որովհետև Աստված նրանցից հեռացավ և մեզ հետ է» (*Թվեր ԺԴ 9*): Ապաշխարողը կասի նաև, թե ինքը չի վախենում չարից, որովհետև Նա՝ Տերը, իր հետ է:

**ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՂՈՒԹՅԱՆ,
ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՈՄԱՆՅ
ԱՌԱՏԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹**

Նույն գողերին հրճվանքով էին պատժում պատճառաւ վնասների հատուցման համար: Գող էին կոչվում նրանք, ովքեր այս ու այնտեղ զգեստներ էին գողանում հակառակ տիրոջ կամքի, կամ ովքեր ի պահ վերցրած գումարը խաբեությամբ իրենցով էին անում կամ ձին մեկ օր հեծնելու համար էին փոխ վերցնում, սակայն երկու օր էին հեծնում:

Դրանց դիմաց պատիժները զանազան էին. հույները շիկացած երկաթով այրում էին գողերի ճակատները՝ որպէս խարան: Լիկոյարգեսն² օրենք սահմանեց՝ կարել գողերի քթերը: Նումա Պամփյուլացին³ հրամայեց կտրել մեկ ձեռքը: Եգիպտացիների Ամասեթագավորը մի ընդհանրական հրաման արձակեց, թե իր իշխանության մեջ ոչ ոք ծույլ և անգործ չպետք է մնա, և եթե մեկն իր ձեռքով սայրուստ չի վաստակում, կգանահարվի, իսկ եթե իշխան լինի, կգրկվի իշխանությունից ու կարտաքսվի: Եվ ամեն տարի թագավոր

1 Թարգմ.՝ Սարգիս սրկ. Հակոբյան:

2 Աթենացի քաղաքական գործիչ, օրենսդիր (Ք. ա. IV դ.):

3 Նումա Պամփյուլացի - ըստ առասպելի՝ Հռոմի երկրորդ կայսրը (Ք. ա. 715-673 թթ.):

րը հաշիվ էր պահանջում դատավորներից, թե արդյոք կա՞ն էլի ծուլներ, իսկ եթե գտնում էր, դատավորներին էր պատժում: Պտղոմեոսը ևս մի օրենք գրեց, թե երբ մի հայր իր որդուն անկիրթ և առանց ունեցվածքի թողնի, ծերանալիս նրա որդին թող նրան չխնամի:

Երբ Մեծն Ալեքսանդրը գտնվում էր Եգիպտոսում, Պիանդո անունով մի աղջկա աղքատ հորը խնդրեց, որպեսզի իր դուստրերից մեկին իրեն օգնական տա, որի դիմաց նրան մի քաղաք շնորհեց: Պիանդոն ասաց. «Գուցե ասածներդ կամ խնդրածներդ չե՞ն գիտակցում»: Ալեքսանդրն ասաց. «Շատ լավ գիտեմ և քաղաքը տալիս եմ քեզ ոչ թե որպես պարգև, այլ տալիս եմ գիտակցելով, թե ինչ պետք է շնորհեի»: Նույն Ալեքսանդրը Ֆոշիոզ Աթենացուն հարյուր տաղանդ արծաթ ուղարկեց և երեք քաղաքների վրա իշխանություն տվեց՝ հարցնելով, թե նրանցից որն է հավանում: Ֆոշիոզը ոչ արծաթն ընդունեց և ոչ էլ քաղաքների վրա իշխանություն ունենալը, և որպեսզի պարգևներն անարգող չհամարվի, խնդրեց դրանց փոխարեն Մարդինիայի բանտից արձակել Էքեկրատե խափշիկին, Աթինոտորոս Հիմերոն և Տենարաթո եղբայրներին: Այնքան սիրվեց Ֆոշիոզն Ալեքսանդրի կողմից, որ վերջինս նրան մի նամակ գրեց. «Ես քեզ ողջունում եմ»: Ուրիշ որևէ մեկին այդպես չէր գրել:

Պարսիկների մոտ սովորություն կար, որ երբ Արտաշես¹ թագավորը շրջում էր կամ ինչ-որ տեղ էր գնում, նրան ընծա էին տալիս: Մի օր նա Մնեմոնե անունով մի գյուղացու հանդիպեց, և խեղճ գյուղա-

1 Արտաշես Ա - Աքեմենյան Պարսկաստանի արքա (Ք. ա. 464-425 թթ.):

ցին ապշեց, ու քանի որ իր տունը հեռու էր, ոչ մի բան անել չէր կարող: Շտապ գնաց Չիրո գետի մոտ, ափով ջուր վերցրեց և ասաց. «Ո՛վ արքա, Աստված տա, որ դու քո ամբողջ կյանքում քո թագավորությունը վայելես: Ես այժմ պատվում եմ քեզ այնքանով, որքանով կարող եմ՝ Չիրո գետի այս ջրով, իսկ երբ գնաս քո պալատը, քեզ ընդառաջ կելնեն իմ ուղարկած ազնիվ ընծաներով՝ ըստ քո արժանիքների»: Արտաշեսը շատ ուրախացավ նրա պարզամտության վրա ու ասաց. «Ես քեզ և քո ընծաները հոժար կամքով ընդունում եմ և քեզ բոլորից բարձր եմ գնահատում, քանզի ջուրը բոլոր կենսական կարիքներից ամենակարևորն է»: Եվ իր սպասավորներին հրամայեց, որպեսզի այդ ջուրը լցնեն ոսկե ամանների մեջ, իսկ նրան պարգևեց մի զգեստ՝ բոլոր զարդարանքներով, և մի ոսկե աման ու հագար ռուփի: Մի անգամ էլ Միսիոս անունով մեկը նրան բերեց մի մեծ խնձոր՝ «սիրո պտուղ» կոչվածից: Թագավորը նրան հարցրեց. «Ո՛ւմ այգուց բերեցիր»: Նա պատասխանեց. «Իմ պարտեզից, որն իմ ձեռքով տնկեցի, և արդ, նախ սա քաղեցի»: Սա թագավորին հաճելի թվաց, և նրան որպես ընծա ուղարկեց իր կառքը:



ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ՈՐՔԱՆ ԳԱՐՇԵԼԻ Է ԱՊԵՐԱԽՏՈՒԹՅՈՒՆԸ¹

Աթենացիների Սոլոն օրենսդիրը չկամեցավ օրենք գրել հայրասպանների վերաբերյալ: Իսկ հարցնողներին պատճառն այսպես մեկնաբանեց, թե չի հավատում, որ նման եղեռնագործություն և ամբարշտություն կարող է լինել աշխարհում, որ որդին սպանի մինչև անգամ հորը: Նրա նման և Լիկոյարգեսը՝ լակոնիացիների օրենսդիրը, չկամեցավ օրենքներ սահմանել ապերախտների համար՝ ասելով, թե ցուցադրական կլինի և անհնար է չճանաչել ապերախտներին:

Մեր առաջին և գլխավոր երախտավորն Աստված է, որ Իր տնկած այգում ոչինչ պակաս չթողեց, որովհետև օրենքներով ցանկապատեց այն և ամրացրեց հրեշտակային պաշտպանությամբ: Հնում աշտարակն էր տաճարը, հիմա Քրիստոսի Սուրբ Խաչը: Սուրբ Սկիհը հնձանն է, որում լցվում է Քրիստոսի արյունը: Կամ եկեղեցու սրբերի երանը ցանկապատ է, որոնք որմի նման շրջապատում են եկեղեցին, որովհետև եթե այն քանդվի, այգին կկործանվի, ըստ այդմ կքանդվի նրա ցանկապատը, և ամրությունները կսասանվեն:

¹ Թարգմ.՝ Լևոն սրկ. Բաղիրյան:

Այսպես Սողոմն ավերվեց, երբ Ղովորը ելավ Սողոմից, և Եգիպտոսը կործանվեց, երբ Իսրայելի ժողովուրդը դուրս եկավ այնտեղից (*Ելք ԺԶ*): Բայց հրեաները երախտամոռ գտնվեցին, որովհետև շուտով կռապաշտության մեջ ընկան:

Երախտամոռ գտնվեց նաև նոր եկեղեցին, որովհետև ընկավ կեղծավորության մեջ: Ոսկեբերանն ասում է. «Աստված մեզ ստեղծեց ոչնչից և մեզ համար հաստատեց բոլոր տեսանելի բաները՝ ծովը, օդը և այն ամենը, ինչ նրանց մեջ կա: Կենդանի շունչ փչեց մեր մեջ, դրախտը տնկեց մեզ համար, օգնական տվեց կնոջը, մեզ տեր կարգեց Իր բոլոր ձեռակերտների վրա, պսակեց փառքով և պատվով և մեր երախտամոռությունից հետո անգամ մեծամեծ պարգևների արժանացրեց: **Աստված իր միաձին Որդուն ուղարկեց նաև ապերախտների համար, որոնք Նրա բարիքը վայելում են, բայց Նրան՝ ատում:** Երկինքը բացեց և դրախտ ուղղորդեց որդեգիրների թշնամիներին: Շնորհեց մկրտություն՝ մեղքերի թողության համար, ազատեց պատիժներից, պարգևեց արքայություն: Արդ, ի՞նչ պետք է անել այսքան երախտիքներից հետո: Քիչ է, եթե ամեն օր մեռնենք Նրա համար, և մի՞թե դա տեղին չէ, սակայն այս դեպքում անգամ չէինք կարող փոխհատուցել Նրա բարիքների մի փոքր մասն անգամ»:

Երկրորդ երախտավորները մեր ծնողներն են՝ մարմնավոր և հոգևոր: Մարմնավոր ծնողներն Աստծուց հետո երկրորդ բարերարներն են և մեր գոյության պատճառը (*Սիրարք Է 38*). Եթե նրանցից ծնված

չլինես, գոյություն ունենալ չես կարող: Իսկ հոգևոր ծնողներն ու ուսուցիչները մեր բարեկեցության երաշխավորներն են, որի համար արժանի են պատվի:

Ահավոր էր Հովաս արքայի ապերախտությունը, որին Հովիադա քահանայապետն ազատեց Գոթոդիա թագուհու սրից, դաստիարակեց աստվածպաշտությամբ և վերջապես նրան թագավոր դարձրեց հոր փոխարեն: Բայց Հովիադայի մահից հետո Հովասն իշխանների խրատով չարացավ և կռապաշտ դարձավ, իսկ բարի խորհրդատուին՝ Ջաքարիա քահանայապետին՝ Հովիադայի որդուն, քարկոծելով սպանեց Տիրոջ տանը: Հովասը չհիշեց նրա հոր գութն իր հանդեպ, ուստի Աստված մատնեց իշխաններին ասորիների փոքր գորքի ձեռքը: Եվ նույն տարում Հովասը հիվանդանալով չար մահվամբ սատակեց (*Բ Մնաց. ԺԳ 12*):

Այսպիսի մի բան է գրվել նաև մի այլ մեծ ապերախտության մասին: Ի՛նչ արեց Ադամն Աքիաքարին, որը սնել էր նրան. պատմում են, թե ինչպես լույսից նրան տարավ խավար և որքան չարիք գործեց նրա նկատմամբ, բայց Աքիաքարը փրկվեց, իսկ նա ստացավ հատուցումը. նրա փոխարեն Ադամն իջավ խավարի մեջ: Մանասեն ողորմություններ արեց և իր դեմ նյութած մահվան օրը փրկվեց, իսկ Ադամն ընկավ որոգայթը և կործանվեց (*Տոբ. ԺԴ 12*):

Մեր երրորդ երախտավորները հրեշտակներն են և Աստծու ծառաները, որովհետև պահպանում են մեզ և բարեխոս լինում:

Արդ, ապերախտները գրկվում են բարիքներ ընդունելուց, որովհետև ինչպես ասում է Օգոստինոսը, ինչ որ Աստված ձրի տվել էր, վերցրեց ապաշնորհներից: Դարձյալ տրված շնորհների խափանման մասին Գրիգոր Պապն ասում է, թե ով իր վերցրածների համար չի գոհանում, արժանի չէ շնորհ առնելու, հավելյալ ստանում է նաև պատիժ, ինչպես Եզեկիան, որ հիվանդացավ ապերախտության պատճառով, որովհետև երգերով և զոհերով չգոհացավ Աստծուց Սենեքերիմի գորքերի կործանման համար (*Բ Մնաց. ԼԲ 25*):

Ապերախտը ոռոգված, բայց փշաբեր հող է, գաղձավոր այգի, խորշակահար հողմ, շնորհների կորուստ և Աստծու ողորմության ցողը ցամաքեցնող: Նա ավելի վատն է, քան բորոտությունից բժշկված այն այլագգին, որը հետ դարձավ և փառաբանեց Աստծուն, իսկ իրենք՝ հրեա քահանաները, անշնորհակալ եղան և նրա օրինակով չգոհացան Աստծուց: Ուրեմն ապերախտ քրիստոնյան ավելի վատն է, քան բորոտությունից բժշկվածը կամ հրեաները:



ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ԱՂՈՒՔԸ ՇԱՏ ՕԳՏԱԿԱՐ Է ԱՅՆ ԱՄԵՆԻ
ՀԱՄԱՐ, ԻՆՉ ՈՐ ԽՆԴԻՎԵԼՈՒ Է¹

Քրիստոս Իր մարմնի փոխարեն պատարագեց հացն ու գինին, բացեց Իր ողորմության գանձարանը և ասաց առաքյալներին. «Մինչև այժմ Իմ անունով ոչինչ չխնդրեցիք, խնդրեցեք և կատանաք» (*Հովհ. ԺԶ 24*): Երբ Աբելն իր հոտերից անարատը որպես պատարագ մատուցեց, Աստված երկնքից հրով վկայեց, որ նրա պատարագն ընդունելի է: Սուրբ Գրքում հուրը խորհրդանշում է սերը, և մենք պարտավոր ենք հավատալ, թե **Սուրբ Պատարագի ժամանակ ջերմեռանդ աղոթողների սրտերի մեջ իջնում է սիրո հուրը**: Եվ եթե նրանց խնդրածներն Աստծուն հաճելի լինեն, սիրո հրով կվկայի այդ: Սրա համար Պատարագի խորհուրդը կոչվում է սիրո խորհուրդ: Զատկի տոնից առաջ Հիսուս իմացավ, որ այս աշխարհից Հոր սոտ է փոխադրվելու, սիրեց յուրայիններին, ովքեր այս աշխարհից են, իսպառ սիրեց նրանց (*Հովհ. ԺԳ 1*): Քանզի ինչպես մեկը, որ մեռնում է, մահվան ժամին իր ունեցվածքը բաժանում է իր որդիներին և զավակներին, նույնպես էլ Քրիստոս խաչի վրա մահանալիս Իր ունեցվածքը՝ աստվածային Մարմինն ու Արյունը, Իր սերն ու շնորհը

¹ Թարգմ.՝ Գագիկ սրկ. Երևանցի Հովհաննիսյան:

բաշխեց հավատացյալներին, ամենապատիվ հայրական պատվիրաններով ուսուցանեց առաքյալներին, նրանց միջոցով էլ՝ մեզ: Այսպես և Աբրահամը մահվան ժամանակ ողջ ունեցվածքը բաշխեց իր ժառանգներին, և ամբողջ ժառանգությունը հայրական օրհնությամբ տվեց Իսահակին (*Ծննդ. ԻԵ 7-11*): Սա Ահարոնի բուրվառի միջի հրի խորհրդանիշն է, որով քավվեց ժողովրդի մեղքը և վերացվեց մահը: Քանզի երբ այս սիրո խորհուրդը խնկելի աղոթքներով նվիրվում է Աստծուն, վերացվում է հավիտենական մահը, և արժանապես ճաշակելու դեպքում վերցվում է տարածամ մահը, ինչպես նաև անարժանաբար ճաշակելու դեպքում պատճառ դառնում հիվանդության, ախտի, դիվահարության և այլ բաների: Քանզի եթե գառան արյունը, որ Քրիստոսի արյան օրհնակն է, փրկեց եբրայեցիներին հրեշտակների կոտորածից և հենց նույն առավոտ ազատեց նրանց եգիպտական գերությունից, որքան առավել ևս Քրիստոսի արյունը կարող է դիմագրավել սատանայի սրին և ազատել մեզ եգիպտական դժոխքից:

Բայց այն ճաշակում էին Իսրայելի բոլոր որդիները և թլփատվածները, իսկ սա՝ բոլոր քրիստոնյաները, Հայր Աստծուն որդեգրվածները և մեղքերից թլփատվածները: Այն ուտում էին բաղարջ հացով և եղեգով, իսկ սա՝ դառը զղջման մաքուր խղճմտանքով: Այն՝ ոտքի վրա և ցուպը ձեռքին, սա՝ արիությամբ և Քրիստոսի խաչի չարչարանքներին մասնակցելով: Այն՝ երեք օրում, իսկ սա՝ ամեն ժամ:

Նրա ոսկորը չէին փշրում, և խորհրդի գործությունն նրա մեջ է, որ պետք չէ թերահավատությամբ բեկանել: Մովսեսն արեց նիսան (մարտի 23-ից մինչ ապրիլի 23-ը) ամսի լուսնի առաջին լրման ժամանակ, իսկ սա Քրիստոս հին օրենքի համաձայն արեց, որի համար Պատարագից հետո ասում ենք. «Կատարումն օրինաց և մարգարեից Դո՛ւ ես, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս Քո, լից և զմեզ Հոգովդ Քով Սրբով»: Քանզի ինչպես հայրն իր որդու հարսանիքի ժամանակ նրա պատվին բոլոր բարեկամների հետ խրախճանք է անում, նույնպես և Սուրբ Պատարագի ժամանակ (որ Աստծու Որդու՝ Քրիստոս Գառան հարսանիքն է) երկնավոր Հայրը բոլոր կանչվածներին ընծաներ է բաշխում՝ բանալով Սուրբ Հոգու պարգևների և շնորհների գանձերը, և նվիրում է ամենքին: Քանզի ինչպես բոլոր պատվիրաններն ունենալով հանդերձ՝ Ադամն ու Եվան ճաշակեցին կենաց ծառի պտղից և անհնազանդության պատճառով արտաքսվեցին, նույնպես և սա՛ կարող են ճաշակել Քրիստոսի պատվիրաններին հնազանդվողները: Ուրեմն և մենք՝ որդեգրվածներս, Քրիստոսի խոստման համաձայն՝ «Մինչև այժմ Իմ անունից ոչինչ չխնդրեցինք: Խնդրեցեք և կտրվի»:

Խնդրում ենք Հայր Աստծուց Նրա Որդու՝ Քրիստոսի Արքայությունը, որպեսզի Նա Ինքը մեր հոգում թագավորի: Խնդրում ենք մեր մեղքերին թողություն, որպեսզի Հիսուս Քրիստոսի Արյունը սրբի մեզ բոլոր մեղքերից, ինչպես և Ինքը խաչի վրա աղոթեց Հորը՝ ասելով. «Հայր, ների՛ր նրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. ԻԳ 24): Քանզի ինչպես Մով-

սեսն իր որդու արյան հեղումով ազատվեց հրեշտակային սպանդից (Ելք 7. 24), նույնպես և մենք՝ մեղքից թլփատվածներս, Քրիստոսի Արյան հեղումով ազատվում ենք Աստծու ցասման պատճառով մեզ հասնող բոլոր պատիժներից և պատուհասներից:

Խնդրում ենք նաև առողջություն հիվանդների համար, քանզի այս գինով և շնորհների ձեթով սամարացին պահապան և սպեղանի եղավ Քրիստոսին՝ Երիքովի ճանապարհին ընկածի վերքերը դարմանելով: Խնդրում ենք և աստվածային շնորհների հեղումը, քանզի մանանա իջնելու ժամանակ նույնպես ցող էր իջնում: **Մանանան Քրիստոսի Մարմինն ու Արյունն է, իսկ ցողը Սուրբ Հոգու շնորհն է, և ով ծարավ է, թող մերձենա ու հագենա:** Եվ այս ասում էր Սուրբ Հոգու մասին, որ չտրվեց աշակերտներին մինչև խաչի սեղանի վրա պատարագվելը: Ով փնտրում է մեր թշնամու՝ սատանայի պարտությունը, ապա թող գիտենա, որ սա սատանայի բանակի կործանումն է և այն նույն գարե նկանակը, որ բազմապատկվեց մադիանացիների բանակում՝ Գեդեոնի վրանում (Հառ. Ը): Եթե մեկը ցանկանում է տեսնել զավակների ու որդիների առաքինությունը, ապա սա, արժանապես ճաշակելով, ընդունում է որդիների առաքինի գանազան շնորհները ճիշտ այնպես, ինչպես Տիրամայրը Քրիստոսի՝ Սուրբ Խաչի սեղանին պատարագվելու ժամանակ Հովհաննեսին որպես որդի ընդունեց, իսկ Հովհաննեսը նրան՝ որպես մայր: Քանզի ով արժանապես ճաշակում է այս խորհուրդը, իր հոգում Քրիստոսի բնակությամբ Սուրբ Աստվածածնին որդեգիր է դառնում և Քրիստոսին իր հոգու մեջ կրում:

ԲԱԽՏԻ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ
ԵՎ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԲԱԽՏՆ ԱՍՏԾՈՒՑ
ՏՐՎԱԾ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ Է՛

Հեթանոս փիլիսոփաները, աստվածայինի ճանաչումից զուրկ և մոլորված գաղափարների տեր լինելով, ուրիշ շատ թյուր կարծիքների հետ մեկտեղ նաև այն հարցին՝ ո՞վ է եղել ամենքի արարիչն ու սկզբնապատճառը, ումի՞ց են նախախնամությամբ կախվածության մեջ գտնվում բոլորը, ո՞վ է կառավարում, կարգադրում և օրինադրում բոլոր պատահարներն ու հանկարծակի դիպվածները, պատասխանել են, թե այդ բոլորը բախտի գործերն են: Նաև ասում էին, թե բախտը գոյություն չունեցող, մտացածին, երևակայական մի բան է: Ոմանք էլ կարծում էին, թե բախտը յուրօրինակ մի աստված կամ աստվածուհի է, նա է պատճառը բոլոր պատահարների՝ և՛ հաջողումների, և՛ ձախողումների. իբրև թե ամեն ինչ բախտն է կառավարում: Մինչև իսկ Վերգիլիոսը² բախտն ամենակարող է կոչում: Իսկ Ցիցերոնն ասել է. «Ո՞վ է, որ չգիտե բախտի իշխանությունը բարիների և չարերի վրա, քանզի եթե մեզ ծովում հաջողություն է տալիս՝ հողմ ուղարկելով, շուտ ենք ժամանում և հասնում

1 Թարգմ.՝ Էրիկ ուրկ. Պատվականյան:

2 Պուրլիոս Վերգիլիոս (Ք. ա. 70-թ. հ. 21 թթ.) - Հին Հռոմի հայտնի բանաստեղծ:

մեր նպատակին, իսկ եթե բախտը հեռանում է մեզանից, ալեկոծվում ենք անօգնականության պատճառով: Սակայն հենց այն մարդիկ, ովքեր այսքան կարողություն էին վերագրում բախտին, երբ ձախորդության էին հանդիպում, սկսում էին հայհոյել: Այսպիսով, բախտն էր միայն անվանի, նա էր միայն ամբաստանված, նա էր միայն գովված ու պարսավված: Ոմանք նրան կույր բժիշկ էին կոչում, որ դեղերն ըստ անհրաժեշտության տալ չգիտե, փոխարենն անարժաններին է մեծարում: Միայն նա է ամենքից շնորհակալություն ստանում, և նա է բոլոր մեղքերի հեղինակը: Նաև նա է ոմանց ուղին ձախորդությամբ, իսկ ոմանց ուղին հաջողությամբ պսակում և երկուսից էլ վարձ պահանջում իր աշխատանքի դիմաց: Եվ մինչև հիմա կան մարդիկ, որ նրան աստված են համարում:

Բախտի անունով չաստվածների ձեռագործ կուռքեր էին պատրաստում: Մանավանդ երբ հաղթանակում էին, բախտի չաստծու համար տաճար էին կառուցում: Անմտաբար հավատում էին, թե նրանք, ովքեր ավելի ջերմեռանդ են չաստվածներին պաշտելու մեջ, բախտից առավել օգուտ կստանան:

Ասում են՝ Կալպա անունով մի մարդ գողացավ բախտի չաստծու ոսկե գոտին ու տարավ կապեց լուսաբերի մեջքին, և բախտի չաստվածը, նրան երազի մեջ երևալով, սարսափեցրեց, և այդ տեսիլքին հետևեց շուտափույթ մահը:

Բայց մենք՝ քրիստոնյաներս, հավատում ենք բարիքների պարգևիչ, բարիներին օգնող ու բոլոր չարագործների արդար դատավոր մեկ Աստծուն: Սուրբ

Գրիգոր Նյուսացին բնության մասին իր գրքում ասում է, թե նրանք, ովքեր աստղերն են համարում ամեն ինչի պատճառ, պարզ տրամաբանության դեմ են մարտնչում և ողջ քաղաքակրթությունն անպիտան են դարձնում: Քանի որ, ըստ նրանց, օրենքներն անտեղի են, դատաստանները, որոնցով չարերին են պատժում՝ ավելորդ, իսկ գովքերն ու պարսավանքները՝ գուր:

Անօգուտ է աղոթքը, եթե ամեն ինչ գալիս է աստղերից, որոնք ոմանց շնացող, իսկ ոմանց էլ սպանող են ստեղծում. այդպես մերժվում է Աստծու նախախնամությունը: Իսկ եթե ավելի կարճ ասենք, **բախտի միջոցով է Աստված բարիների համար բարիք գործում, ինչպես որ Դավթի, իսկ չարերին ըստ արդարության պատժում:** Իսկ եթե բարիներից ոմանք դժվարություններ են կրում, իսկ չարերը հաջողության մեջ են, ուրեմն Աստված նրանց այս կյանքում ըստ ողորմության և արդարության է հատուցում: Բարիների հետ այս ամենը լինում է խրատի և իրենց վարձքի հավելման համար, իսկ չարերի հետ լինում է ոչ թե նրա համար, որ Աստված հաղթվի նրանց չարությունից, այլ Իր բարությանը հաղթի չարին: Եվ կամ էլ ինչպես իմաստունն է անհույս վիճակում գտնվող հիվանդներին պատվիրում ուտել, այնպես էլ Աստված է անուղղելի չարերին այս կյանքում բարիք տալիս: Ըստ աղքատ Ղազարոսի առակի՝ դու քո կյանքի ընթացքում բարիք ընդունեցիր, իսկ Ղազարոսը՝ չարչարանքներ և այլն (*հմմտ. Ղուկ. ԺԶ 19-25*):



ՄԻՐՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ ՉԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՄ ՄԱՍԻՆ՝¹

Ոսկերերանն ասում է. «Եթե մեծ իմաստնու-
թյուն չունես, բայց գոնե բավարար չափով
տեղյակ ես, ապա խրատի՛ր հարևաններիդ, բարե-
կամներիդ, ազգականներիդ ու ծառաններիդ»: Եթե
ոչ եկեղեցում, ապա տանը կարող ես դա անել: Տա-
նը փիլիսոփայական նյութերը չէ, որ պետք կգան,
այլ կենցաղային: Իսկ դրանց մեջ, ըստ Արիստոտելի,
կարևոր են չորսը՝ համախոհությունն ամուսինների
միջև, սերը որդիների հանդեպ, երկյուղը ծառաների
մեջ և ծախսերի չափավորությունը: Եթե եկամուտը
քիչ է, իսկ ծախսը՝ շատ, ապա դա հանգեցնում է աղ-
քատության, զրկանքի, անգամ գողության, հափշտա-
կության և այլն:

Կարո՞ղ ես շահել քո ընկերոջը, ինչպես շահում
ես քո անձը: Չէ՞ որ քեզ վատը չես կամենում, ինչ-
պե՛ս կարող ես դա ընկերոջդ կամենալ: Մինչ Մովսե-
սը արտնջում էր ժողովրդին առաջնորդելու համար,
Աստված վերցրեց նրան տված շնորհներն ու բաշխեց
ուրիշներին, որպեսզի ցույց տա, որ նրանց առաջնոր-
դելը Մոսվսեսի շնորհը չէր, այլ Հոգու: Ինչպե՛ս Աբրա-

1 Թարգմ.՝ Մարտուն սրկ. Շահվերոյան:

համը շահեց Ղուվտին, երբ կռվեցին նրանց հովիվները. թեև ինքն էր ավագը, բայց երկիր ընտրելու հնարավորությունը տվեց Ղուվտին և չնախանձեց էլ, երբ Ղուվտն ընտրեց սողոմացիների դրախտային երկիրը (Ծննդ. ԺԳ 1-12):

Եթե շահում ես ընկերոջդ, փրկում ես նրան և քո վարձն ավելացնում: Հակոբոս առաքյալն ասում է. **«Ով մեղավորին ետ է բերում սխալ ճանապարհից, փրկում է իր հոգին մահվանից** և ծածկում բազում մեղքեր» (Հակոբ. Ե 20): Քարոզչությունն ավելի մեծ է, քան հիվանդներին բժշկելը, կույրերին լուսավորելը, մեռելներին հարություն տալը, ինչպես Պետրոսի ստվերից և Պողոսի թաշկինակից էր լինում: Իսկ սերն ամեն ինչից մեծ է: Նախանձախնդի՛ր եղիր շնորհների, որոնք լավն են, բայց սերն ամեն ինչից բարձր է: Քրիստոս Իր աշակերտներին մեռելներին հարություն տալու պատվեր չտվեց, այլ միայն միմյանց սիրելու. «Ավելի շատ ուզում եմ, որ դուք իրար սիրեք, քան մեռելներին հարություն տաք»:

Առանց սիրո չի օգնի ո՛չ մարտիրոսությունը, ո՛չ ունեցվածքի բաշխումը, ո՛չ էլ հրեշտակների քաղցրախոսությունը: Ինչպե՛ս շահեց Հովսեփն իր նախանձոտ եղբայրներին, երբ նրանք իր մոտ եկան. դա Աստծու նախախնամություն դիտեց և եղբայրներին մեղքերից անպարտ համարեց, որպես թե Աստծու ձեռքով եղավ դա, ոչ թե եղբայրների չար կամքով: Նույն կերպ Դավիթ թագավոր մարգարեն թե՛ պարսատիկով քար նետելը և թե՛ նախատիքների արժանանալն ընդունեց իբրև Աստծուց ուղարկված

պարզև: Ոսկեբերանն ասում է, որ մեկը կարող է երկու բարեկամ ունենալ, իսկ մեկ ուրիշը՝ երեք, բայց դա ոչ թե աստվածային սիրո, այլ ընդամենը սիրված լինելու նշան է, իսկ ով Աստծու համար է սիրում, նա իր հավատակիցներին պարտավոր է հարազատ եղբոր պես ընդունել: Երբ Արիստոտելը մի չարաբարո մարդու ողորմություն է տալիս, ոմանք մեղադրում են, թե ինչու է այդպես անում, իսկ վերջինս պատասխանում է, որ ոչ թե չարասիրությունից է դա անում, այլ իր էությունից:

Ընկերոջ հանցանքն ինչ էլ որ լինի, սերն այն ոչինչ է համարում, ինչպես ծանրի համեմատ թեթևը: Որովհետև սերը չի նախանձում, չի գրգռվում, իրենը չի փնտրում... (Ա Կորնթ. ԺԳ 4):



ՀԱՇՏՈՒԹՅԱՆ, ՄԻՐՈՒ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝

Առաջին հերթին մենք պետք է հաշտ լինենք Աստծու հետ, որովհետև նրան խոռվեցրինք մեր մեղքով՝ դրախտում անհնազանդության պտղի ճաշակումով: Եվ ահա տե՛ս, թե այս խոռվության պատճառով որքան վնաս և չար դիպվածներ պատահեցին, որ նախաձեռողները մերկացան ներքին արդարությունից՝ հոգու պատմունճանից ու նաև մարմնի արտաքին լուսե պատմունճանից, որի պատճառով թզենուց ծածկոց կարելու կարիք առաջացավ: Նաև Աստծու սերը կորցրինք, և սա հայտնի է Ադամի երկյուղից, որն ասաց. «Լսեցի Քո ձայնը և երկնչեցի» (Ծննդ. 9 10):

Ըստ Հովհաննեսի՝ երկյուղը սիրո չի հանգեցնում, իսկ Պողոսն ասում է. «Մինչև հիմա թշնամիներ էիք, բայց Աստծու հետ հաշտվեցիք Նրա Որդու մահվամբ» (Հռովմ. 5 10):

Պետք է իմանալ, որ եթե մեկն իր ունեցվածքի վրա անմեղ մի մարդու է տնտես կարգում, բայց իր դիրքից ելնելով նրա հետ հաշտ չի լինում, պետք է իր տված տնտեսությանը հետևի, ինչպես որ հայտնի է թագավորների կյանքից: Իսկ Աստված ամբողջությամբ անմեղ է և բարի համբավ ունեցող փառքի թագավոր. անմեղ է, որովհետև խայթոց և խայթելու ցանկություն չունի ճիշտ այնպես, ինչպես մեղուների

1 Թարգմ.՝ Նորվան սրկ. Իսախանյան:

թագավորը խայթոց չունի, և երբ ուրիշ պիծակներ ապստամբում են, մյուս մեղուները հարձակվում են նրանց վրա և հալածում:

Մուրբ Եփրեմն ասում է. «Եղբայրներ, ո՞վ կարող է հատուցել Աստծուն մեզ ստեղծելու և պահելու համար: Իսկ չէ՞ որ դրա դիմաց մեզանից ոչինչ չպահանջվեց: Բայց եթե պարզ հարցերում անփույթ ենք լինում, պատժում է մեզ. «Իմ բարկության պատճառով հարվածեցի քեզ և իմ գթասրտության համար սիրեցի քեզ»» (Եսայի Կ 10):

Բայց Աստծուց տրված ամեն բարիք ապերախտությամբ ընդունեցինք. ոչ թե Նա մեզ արհամարհեց, այլ մենք Նրանից տրված շնորհը ոչնչացրինք և հնազանդության փոխարեն ապստամբեցինք և Նրա անունն արատավորելով՝ հայհոյել տվեցինք հեթանոսների մեջ:

Մտքում պարտավոր ենք հաշտվել Նրա հետ, հաշտվել ապաշխարությամբ, պարտավոր ենք զղջումով մեր մեղքերը ճանաչել և ոչինչ չճածկել Նրա ամենատես աչքից: Աքայաբն Իսրայելի կռապաշտ թագավորներից չարագույնն էր, բայց զղջաց և Աստծուն ապավինեց, ինչպես Աստված ասաց Եղիային. «Տեսա՞ր, որ Աքայաբը զղջաց իմ առջև: Եվ քանի որ ընդունեց իր մեղքերը, նրան չարիք չեմ պատճառի իր կենդանության օրոք» (Գ Թագ. ԻԱ 29):

Այսպես է վարվում ողորմած և բարեգութ Աստված բոլոր ապաշխարողների հետ. մեղքերին թողություն է տալիս և դարձնում դեպի Եկեղեցի, հաշտվում է պարտապանի հետ և շնորհներով նորոգում: Սատանայի որդուն որդեգրում է և հրեշտակներին ուրախություն պատճառում, արդարացնում է ամբարշտին

և նրա կորցրած բարիքը գտնելով՝ վերստին նվիրաբերում է կորցնողին, հավիտենական կյանք է շնորհում և հեռացնում հավիտենական պատիժը:

Պարտավոր ենք հաշտվել մեզ վնաս տվողների հետ, ինչպես Աստված է մեզ հետ հաշտ լինում՝ չնայած որ միշտ վնաս ենք տալիս նրա տված շնորհներին, բարերարությանը և երկրպագելի սուրբ անվանը: Սակայն որքան էլ արդար ու անմեղ լինենք ու հաշտվենք անհնազանդի հետ, պետք է մեզ մեղավոր համարենք: Այդպես Դավիթը, կամենալով Սավուղի չար սիրտը փափկացնել, ինքն իրեն շուն և լու անվանեց (*Ա Թագ. ԻԴ 15*): Բայց մի՞թե շուն դարձավ կամ լու. ո՛չ երբեք: Այդպես էլ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մեղավոր և անիծյալ համարվեց, որպեսզի վերացնի մեր մեղքը: Նույնպես Աստված, կամենալով Եսավի չար սիրտը փափկացնել, հրեշտակի միջոցով Հակոբի ազդրի ջլերն անզգայացրեց:

Եվ ով կամենում է հաշտվել մեկի հետ, որքան էլ անպարտելի ու հզոր լինի, թշնամուն մեղմելու համար պարտավոր է խոնարհություն ցուցաբերել և մեղքն իր վրա վերցնել, այդպիսով կակղեցնել ոտխի սիրտը, ներում խնդրել և հանդուրժել չարաբանությունները: Ահա կան այդպիսի օրինակներ:

Սուկրատեսի աշակերտ Արիստիպպոսը համբերատարությամբ տարավ Դիոնիսիոս բռնավորի թուքը, և երբ մեկը հարցրեց նրան, թե ինչպես հանդուրժեց այդ նախատինքները, Արիստիպպոսը պատասխանեց. «Ձկնորսը, որպեսզի բռնի ձկանը, հանդուրժում է ծովի ցողը, ես կհանդուրժեմ թուքը, որպեսզի կետին բռնեմ»:

Էսքիներս¹ փիլիսոփան էլ, կամենալով հաշտվել Սոկրատեսի հետ, ասաց նրան.

- Մի՞թե չենք հաշտվելու, մի՞թե խելագարությանը վերջ չենք տալու և մի՞թե կամենում ես, որ դատարկաբանի մեկը մեզ հաշտեցնի: Եվ նույն ժամին էլ հաշտվեցին:

Մեկն անիծեց Սոկրատեսին, և վերջինս ասաց նրան.

- Խնդիր չեմ տեսնում, որ խոսել չես սովորել:

Իսկ ուրիշ մեկը վատաբանեց Արիստոտելին և ապա հարցրեց. «Կարողացա՞ք եզ անարգել»: Արիստոտելը պատասխանեց.

- Թող Դիոսը վկա լինի՝ մտքումս չպահեցի, ինչ որ ասացիր ինձ:

Անհաշտ խռովությունը մարդուն զրկում է մարտիրոսական պսակից: Մի մարդ, որ շատ էր չարչարվել հավատի համար և մոտ էր մարտիրոսության պսակին, չկամեցավ հաշտվել մեկ ուրիշի հետ, այդպիսով ուրացավ Քրիստոսին և զրկվեց երկնավոր պսակից:

Անմեղը պարտավոր է հաշտվել թշնամու հետ, որն առավել ևս պարտավոր է հատուցել անմեղի ունեցվածքին ու անվանը հասցրած վնասը: Եվ եթե անմեղն անոխակալ գտնվի ու չպահանջի հատուցում և ների ամեն բանի համար, այդ ժամանակ անմեղն առաքինությամբ է պսակվում, իսկ վնաս հասցնողը վատ համբավ է ձեռք բերում:

Պարտավոր ենք ինքներս մեզ հետ հաշտվել և մեր հոգին ու մարմինը ենթարկել Աստծուն: Հակառակ դեպքում Սավուդի պես կընկնենք մեր սրի վրա և ինքներս մեզ մեր սրով կսպանենք:

1 Հույն անտիկ փիլիսոփա (Ք. ա. IV դ.):

ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¹

Ինչպես ասում է Սուրբ Բարսեղը «Հարցումների գրքի» 17-րդ գլխում, շարունակ վիճելն ամբարտավանության նշան է:

Անտեղի ու սխալ վիճողներից առաջինը եղավ Մինոն կախարդը (*Գործք Ը 9*), որ շարունակ գնում էր Պետրոս և Պողոս առաքյալների ետևից, տակնուվրա անում նրանց ողջամիտ քարոզչությունը, մինչև որ բարձունքից ընկավ ու սատակեց՝ ազատելով եկեղեցին իրենից: Երկրորդը եղավ պիղծ Էլեմաս մոգը, որին Սուրբ Պողոսը Կիպրոս կղզում կուրացրեց (*Գործք ԺԳ 11*): Երրորդը եղավ Կերինթոսը՝ Սուրբ Հովհաննես ավետարանչին հակառակվողը, որ, մտնելով Եփեսոսի բաղնիքը, տեսավ Հովհաննեսին հրավառ բաղնիքում և ասաց. «Ճանաչո՞ւմ ես ինձ»: Եվ նա ասաց. «Այո՛, ճանաչում եմ քեզ, քանզի դու ես սատանայի անդրանիկը»: Չորրորդը եղավ Դիոտրեփեսը, որ հակառակ էր նույն ավետարանչին և չէր ընդունում նրան, նեղություն էր պատճառում երանելուն և եկողներին շեղում էր սուրբ հավատքից, եկեղեցուց հեռացնելով՝ մոլորեցնում էր (*Հովհ. Գ 9*): Հինգերորդը

¹ Թարգմ.՝ Արթուր սրկ. Վարդանյան:

եղավ պիղծ Արիոս Ալեքսանդրացի երեցը, որ մարտնչեց ընդդէմ Քրիստոսի աստվածային հավատի, և ի վերջո կործանվեց գարշելին գարշ աղբանոցի մեջ:

Արդ, հաստատուն և հայտնի **ճշմարտության դեմ վիճաբանելը հանդգնություն է և հայհոյություն Սուրբ Հոգուն՝** եկեղեցու ճշմարտության լույս ծագեցնողին: Իսկ եթե եկեղեցուն կամ հավատին հակառակվողները վեճ բացեն, ապա նրանց պատասխան տալն աշխարհականների գործը չէ, քանի դեռ չգիտեն աստվածաբանություն և փիլիսոփայություն և չպիտի հանդգնեն վիճել՝ նմանվելով գառներին, քանզի գառները չէ, որ կարող են մարտնչել գայլերի դեմ, այլ հովիվները՝ ճիշտ Իսրայել Հակոբի և Գողիաթին պարսաքարով սպանող Դավթի նման: Նույն կերպ գլխավոր հովիվ Մովսեսը հեռացրեց մադիանացի հովիվներին և հագեցրեց քրմի դստերի հոտին (*Ելք Բ 17*): Քանզի ճշմարիտ հովիվից պետք է ակնկալել կեղծ հովիվներին հեռու քշելը, ծանր վեմն ու Սուրբ Գրքերի խրթին տեղերը մեկնաբանելը, ինչն արեց Հակոբը: Դա խոստովանեցին նաև Միջագետքի դուստրերը, թե հնարավոր չէ հագեցնել հոտը, մինչև չժողովվեն հովիվները և չգորեն վեմը ջրհորի բերանից (*Ծննդ. ԻԹ 8*):

Եվ այդպես Մովսեսը հակառակվելով վիճում էր Հանեսի և Համբեսի հետ, որոնք Իսրայելի որդիներ չէին: Եվ Սուրբ Ստեփանոսը Սուրբ Հոգով վիճում ու ատյանում իր հակառակորդներին հաղթում էր ճշմարտությամբ: Սուրբ ժողովներում երկրավոր թագավորները չէին հերետիկոսների՝ Արիոսի, Մակե-

դոնի և Նեստորի հետ վիճողները, այլ միայն պաշտպանում էին բարին և վանում էին չարը, իսկ հավատի հանգանակները և եկեղեցու այլ պարագաները միայն սուրբ հայրապետներն էին սահմանում, նգովքով արտաքսում հերետիկոսներին, իսկ բարեպաշտ թագավորներն էլ աքսորի էին ուղարկում անուղղելիներին:

Ովքեր վիճաբանում են եկեղեցու հակառակորդների դեմ, պարտավոր են զինվել հավատով, Սուրբ Գրքի վկայությամբ և ստույգ առարկությամբ, որոնցից մեկը եթե պակաս լինի, մեղանշած կլինեն:

Ինչպես որ քաղաքավարության համաձայն անտեղի են վեճերն ու հակառակությունները, այնպես էլ անպատեհ են հավատացյալների համար վեճերն ու տարաձայնությունները: Որովհետև **տարաձայնությունը հակառակ է եկեղեցու միաբանությանը**: Եվ այդպես վարվողները կարտաքսվեն Արքայությունից, ինչպես պատահեց երկնքից արտաքսված Սադայելի հետ, նաև Կայենի հետ, որի համար Տերն ասաց. «Ով կսպանի Կայենին, յոթնապատիկ վրեժի կարժանանա» (*Ծննդ. 7 15*): Աստված նաև աշտարակաշինության համար միաբանվածներին հիմնավորապես ցրեց՝ լեզուների շփոթությամբ: Առաքյալը վիճաբանել սիրող մարդկանց միմյանց պատառոտող շներ է կոչում: Սպասավորի տերը չպետք է անտեղի վիճի, քանզի դա կարող է կործանել լսողներին, այլ պետք է հանդարտ մնա, քանզի **հանդարտ ջուրը ցույց է տալիս մարդու պատկերը, ինչպես որ խաղաղ հոգում է երևում Աստծու պատկերը**:

Մարդիկ քաղցրաբար պետք է վարվեն միմյանց հետ, ոչ թե վեճերով, քանզի միևնույն Հայր Աստծու և Մայր եկեղեցու որդիներ են, նույն ավագանի ծնունդներ, նույն Արքայության ժառանգորդներ: Ղովտի հովիվները վիճեցին Աբրահամի հովիվների հետ, Սողոմոնացիների երկիրը վիճակվեց Ղովտին, որը մի կերպ փրկվեց Աստծու օգնությամբ (*Ծննդ. ԺԴ*): Անհաղթահարելի հպարտությունից ծնվում է վեճը, իսկ **հպարտությունը սատանայի գործն է**, որը լքեց երկինքը՝ վիճելով Միքայել հրեշտակապետի հետ: Եվ թեպետ հաղթվեց, սակայն իր ընկած բնությամբ անեծք մնաց մարդկանց վրա:

Սակայն վեճը երբեմն կարող է բարի մտադրությամբ լինել, ինչպես, օրինակ, եբրայեցիների հրեշտակը վիճում էր պարսից հրեշտակի հետ՝ անդելով, թե եբրայեցիների ապաշխարությունը լրացել է գերությունից ազատվելու ժամանակամիջոցում, իսկ պարսից հրեշտակն էլ վիճում էր, թե մեղքերի պարտքը բավականաչափ չեն վճարել: Եբրայեցիների հրեշտակը հաստատում էր, թե ապաշխարությունը միախառն է ողորմության հետ:

Բայց միևնույն է, վեճի վնասն ավելի շատ է, քան օգուտը: Ինչո՞ւ:

Նախ՝ քանի որ վեճը թուլացնում է Աստծու ձեռքը, որ միշտ պատրաստ է օգնել բարու հետ համաձայնողներին:

Երկրորդ՝ քանզի հպարտության նշան է: Հպարտության մեջ միշտ կռիվ կա (*Առակ. ԺԳ 10*):

Երրորդ՝ քանզի հիմարության նշան է: Հիմարը միշտ կռիվների մեջ է հայտնվում կամ իր համախոհներին ինքն իր ձեռքով վանում է: Վայ այդ ճանապարհին կանգնածներին:

Չորրորդ՝ հզորի հետ վիճող տկարը կործանում է իրեն: Մի՛ վիճիր հզոր մարդու հետ, որ չընկնես նրա ձեռքը (*Միրաք Ը 3*): Մեծն Ալեքսանդրը եթովպացիներին գրեց. «Եղէք կան հզոր, կան հզորին հարկատու»: **Պետք չէ վիճել նաև լեզվանու, հարբեցողի, բարկացողի և կնոջ հետ:** Կաթոցը տանից հանում է մարդուն, իսկ անզգամ կինը՝ ամուսնուն (*Առակ. ԻԷ 15*):



**ՄԻՇՏ ՀԻՇԻՐ ԱՍՏԾՈՒՆ ՄՏՔՈՎ, ԲԵՐԱՆՈՎ
ԵՎ ԲՈՒՈՐ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐՈՎ ՈՒ ՆԱԵՎ
ԳՈՐԾՈՎ¹**

Նավիթ մարգարեն Աստծուն մտքով հիշե-
լու մասին ասում է. «Իմ անկողնում հիշեցի
Քեզ»: Իսկ բերանով հիշելու մասին էլ ասում է. «Վաղ
առավոտյան խոսում էի քեզ հետ» (*Մաղմ. ԿԲ 7*):

Հիրավի, Աստծուն պետք է հիշել մանավանդ գի-
շերը, երբ միտքն ապահով է, երբ մեղավորը կարող է
իր մեղքերի համար գանգատվել և թրջել անկողինն
արտասուքով: Դավիթն ու Պետրոսը նույնպես գի-
շերը մեղանչեցին և գիշերով իրենց անկողիններն
արցուքներով թրջեցին:

Գիշերը մարմնի նավը գտնվում է նավահանգս-
տում և երկյուղ չունի ծովի ալիքների ծփանքից: Ինչ
որ ասում եք ձեր սրտերում, զղջացեք ձեր անկողին-
ներում (*Մաղմ. Դ 5*): Թեպետ ցերեկը նույնպես պետք է
հիշել Աստծուն, բայց քանի որ զբաղմունքները խեղ-
դում են, ասում է. «Գոնե գիշերը՝ քնի ժամին, հիշեք
Աստծուն»: Իսկ **առավոտյան աղոթքներով պետք է
սկսել օրը, քանի որ մտքին հաջորդում է բերանը,
իսկ բերանին՝ բարի գործերը:**

¹ Թարգմ.՝ Ատոմ սրկ. Ղարագոյոյան:

Կլեոբուլոս¹ փիլիսոփան ասում է. «Մինչ տանից դուրս գալը պետք է խորհել՝ ի՞նչ պիտի անենք, իսկ տուն գնալու ժամանակ պետք է մտածել՝ ի՞նչ է արդեն արվել»:

Ո՛վ մարդ, եթե կամենում ես ազատվել տրտմությունից, հիշի՛ր Աստծուն և ուրախ եղիր: Եթե բարիք գործեցիր, մի՛ հպարտացիր, այլ Աստծուն հիշիր, որ քեզ կարողություն տվեց բարին խորհելու և գործելու, նաև առաջնորդ եղավ քեզ գործելիս: Մի՛ ասա քո մտքում, թե սեփական ուժերով արեցիր դա, այլ հիշի՛ր Աստծուն, քանզի Նա է քեզ ուժ տալիս ամեն ինչ անելու համար: Եվ ապերախտ մի՛ եղիր, ինչպես իսրայելացիները, որոնք չհիշեցին իրենց Տեր Աստծուն՝ բոլոր նեղություններից փրկողին:

Ով իր բոլոր գործերում չի հիշում Աստծուն, նրա տնկած տունկն ու սերմանած սերմն անհավատներին են մնում, քանի որ ինքը տնկում և սերմանում է, իսկ վայելում են օտարները: Դարձյալ եթե վշտի մեջ ընկնես, հիշի՛ր Աստծուն և կփրկվես: «Երբ հոգիս տկարացավ, Քեզ դիմեցի, Տեր իմ Աստված»:² Աստված իր բարկության ժամին սովոր է հիշել իր ողորմությունը: Եթե կայտառ մանուկ ես, ո՛վ երիտասարդ, և չես կամենում չարիքների մեջ ընկնել, հիշի՛ր Աստծուն քո մանկության օրերին:

Ինչ էլ գործես, Աստծուն քո աչքի առաջ ունեցի՛ր և իմացի՛ր, որ Աստված քո հոգուց առավել մոտ է քեզ, և եթե Նրանով ես շարժվում ու կարողանում ապ-

1 Անտիկ հույն փիլիսոփա (Ք. ա. 540-460 թթ.), «յոթ իմաստուններից» մեկը:

րել, Նրան մի՛ ներքաշիր քո չար գործերի մեջ: Նավն առաջնորդող ղեկն ու նավավարը երբեմն հողմի սաստկության պատճառով թուլանում են, որը նավի խորտակման նշան է: Այսպես է նաև Աստված նավապետը հետևում քո բոլոր գործերին և քո անձնիշխանությանը. անպայման կխորտակվես, եթե քո չար կամքն Աստծուն վերագրես: Նա կպատժի, թեև կշարունակի հետևել քեզ:

Մարդը նման է հնչող շեփորի, միայն թե ներքուստ փչողն աներևույթ Աստված է: Եթե փողը ճեղքված չլինի, անուշ ձայն կարձակի, իսկ եթե լավ ձայն չարձակի, ապա փչողը մեղք չունի, քանի որ դրա պատճառը փողի ճեղքված և խցանված լինելն է: Քանզի օդը, որ ձայնի հնչման պատճառն է, մի բարակ եղեգից էլ է ձայն հանում, հաստ եղեգից էլ:

Միտքը խոսքին բարին է խոսել տալիս, իսկ խոսքն ուղղություն է տալիս գործերին: Առաքյալների ժամանակ անհավատներն ինչպե՛ս էին ճանաչում հավատացյալներին. մարգարեություններից, սաղմոսներ երգելուց: Իսկ ինչպե՛ս պետք է իմացվի, որ դու հիշում ես Աստծուն. քո մտքից շարժվող լեզվից և գործերից, որ կատարվում են խոսքիդ հրամանով:

Եթե ձեռքդ բարիք է գործում, ուրեմն սիրտդ հիշում է Աստծուն: Եթե Աստծու երկյուղից արտասվում ես, նշանակում է հիշում ես Աստծուն: Պետրոսը հիշեց Հիսուսի խոսքը և դուրս գալով դառնապես լաց եղավ: Տեսնո՞ւմ ես, որ Աստծուն հիշելը թրջում է աչքերը: Իսկ եթե կամենում ես լսելով հիշել Աստծուն, ունկնդի՛ր եղիր Սուրբ Ավետարանին, աստվածային

պատվիրաններին և բարի խրատներին: Ահա լսելով հիշեցիր Աստծուն: Կամենում ես հոտոտելիքո՞ւլ հիշել Աստծուն՝ այնժամ, երբ մի անուշ բույր ես առնում, փափկասիրությանդ զոռ մի՛ տուր, այլ նախ փառք տուր Աստծուն՝ հիշելով, թե Արարիչը որքա՛ն քաղցր է ու անուշ, և որքա՛ն մեծ է նրա գթությունը: Սա անելով՝ երբեք զղջալու առիթ չես ունենա: Իսկ ո՞րն է շոշափելիքով Աստծուն հիշելը. երբ Աստծուն հիշելիս ամբողջ մարմնով ցնցվում ու դողում ես՝ մտածելով, որ թույլ և անզոր արարած լինելով՝ ինչպե՞ս ես համարձակվում առյուծի դեմ դուրս գալ: Ուրեմն **բոլոր զգայարանները, որ կան մեր մեջ, Աստծու դռներն են, որոնցով մտնում և ելնում է Աստված** և ասում հարսնացյալ հոգուն.

- Բա՛ց դուռը, քո՛ւյր իմ, աղավնի՛ իմ, կատարյալ իմ, քանի որ երբ հիշում ես Ինձ, Իմ Աստվածային էությունը լցվում է ողորմության ցողով, որով ահա կամենում եմ ցողել հոգիդ (*Երգ Ե 2*):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	7
Մուտք	13
Ծնողների՝ իրենց զավակներին բարին սովորեցնելու մասին.....	19
Այն մասին, թե որքան կարևոր է գորեղ է ճշմարտության պատիվը.....	23
Թե ինչո՞ւ է Աստված երբեմն թողնում սխալվել որոշ գիտունների.....	26
Այն մասին, որ երբ մեկը մեղք է գործում, տանջվում է նրանով, այսինքն՝ փոս փորոզն ընկնում է նույն փոսի մեջ.....	28
Հավատի ուժով նավարկությունից զերծ մնալու մասին.....	31
Մատնության մասին.....	35
Գերիների ազատության մասին.....	38
Անդամալույծների ողորմության մասին.....	42
Մահացածների վրա հեթանոսաբար լաց ջինելու մասին.....	45
Այն մասին, թե ինչու է Աստված այս կյանքում ոմանց պատժում, իսկ ոմանց՝ ոչ.....	48
Ժանտախտից ու մահից միայն աղոթքով և գղջմամբ կարող ենք ազատվել.....	50
Արքայության ճանապարհը դժվար է, իսկ վայելումը՝ հրճվալի.....	53
Հին ժամանակներում գողության և պատիժների և ոմանց առատաձեռնության մասին.....	57
Ապերախտության մասին, թե որքան զարշելի է այն.....	60
Մուրբ պատարագի ժամանակ հասարակաց աղոթքը շատ օգտակար է այն ամենի համար, ինչ որ խնդրվելու է.....	64
Բախտի եւ ճակատագրի մասին, և այն մասին, որ բախտն Աստծուց տրված հաջողություն է.....	68
Միրո և ընկերներ ձեռք բերելու մասին.....	71
Հաշտության, սիրո և միաբանության մասին.....	74
Հակաճառության վնասակարության մասին.....	78
Միշտ հիշիր Աստծուն մտքով, բերանով ու բոլոր զգայարաններով ու նաև գործով.....	83

ՀԱԿՈՐ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼՅԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Հատվածներ Հակոբ Նալյանի
«Գանձարան ծանուցմանց» գրքից

Խմբագիր՝ Ն. Պողոսյան

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2013

Հրատարակչական խորհրդի
Նախագահ և բաժնի տնօրեն՝

Շահե Վրդ. Անանյան

Հրատարակչական խորհրդի
անդամներ՝

Ա. Մադոյան, Պ. Հովհաննիսյան,
Գ. Տեր-Վարդանյան

Սրբագրիչներ՝

Ս. Գրիգորյան
Հ. Նիկողոսյան

Էջադրումը՝

Ղևոնդ քահանա Մայիլյանի

Թուղթ՝ օֆսետը 80 գր., չափսը՝ 120x210 մմ,

ծավալը՝ 88 էջ, տպաքանակը՝ 500:



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ